2015, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (447)

Քրիստոնյա Հայաստան

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հաղթության Մյուռոնով կատարվեց Ջրօրհնեքի արարողություն

Հոկտեմբերի 4-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գիսակ արք. Մուրադյանը:

Իր քարոզում սրբազան հայրը մասնավորապես անդրադարձավ խաչի խորհրդին՝ նշելով. *«Այս շրջանը խաչի տոների շրջանն է: ...Երբ մենք հիշատակում ենք խաչը, նկատի չունենք միմիայն նյութական՝ փայտից կամ որեւէ մետաղից պատրաստված խաչը, այլ նկատի ունենք Խաչյալին, Ով խաչը կրեց մինչեւ Գողգոթայի բարձունքը եւ նրա վրա գամվեց:*

Երբ խոսում ենք խաչի զորության մասին, խոսում ենք Խաչյալի զորության մասին, Ով Իր խաչով Գողգոթայի բարձունքից մարդկանց ցույց տվեց երկրից դեպի երկինք բարձրանալու ճանապարհը: Եվ ավելին՝ խաչով չէ, որ վերջացան մեր հավատքի ուժը կամ Քրիստոսի առաքելությունը, որովհետեւ խաչից հետո Գողգոթային հաջորդեցին դատարկ գերեզմանը, հարությունը, եւ ինչպես ասում է առաքյալը, եթե Քրիստոսը հարություն չի առել, անիմաստ է մեր հավատքը: Ուրեմն խաչը գերագույն զոհողության, զոհաբերության եւ համբերության նշանն է, եւ Քրիստոսը, առած այդ խաչը, բարձրացավ մինչեւ Գողգոթա եւ այնտեղ Իր արյամբ ու խաչելությամբ վերցրեց նաեւ մարդկանց մեղքերը՝ ցույց տալով փրկության ճանապարհը»:

Գիսակ սրբազանը նաեւ խոսեց հայ ժողովրդի կյանքում խաչի նշանակության մասին. *«Վստահաբար գիտեք, որ քիչ չեն եղել մեր ժողովրդի կյանքում տառապանքներն ու հալածանքները, բայց մեր ժողովուրդն ապավինել է Գողգոթայի խաչին՝ հավատալով, որ այդ խաչի վրա Գամվածը հարություն է առել: Եվ մենք եւս մեր խաչով կարողացել ենք հաղթահարել դժվարությունները, պահել մեր հավատքն ու հոգին ոչ միայն հայրենիքում, այլեւ ողջ Սփյուռքում, ուր կան Հայ Եկեղեցի ու հայ համայնք»*:

Հավարտ Պատարագի՝ օրհնված նոր՝ Հաղթության սրբալույս Մյուռոնով, նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Պատարագի արարողությանը ներկա էին նաեւ Մյուռոնօրհնության առիթով Հայաստան ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի ներկայացուցիչներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Իրանի դեսպանին

2 հոկտեմբերի

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտող՝ Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիին:

Նորին Սրբությունը հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու հանդեպ ցուցաբերած ազնիվ վերաբերմունքի եւ հարգանքի համար իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ անդրադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ դեսպանատան միջեւ ձեւավորված գործակցությանը:

Դեսպանը, մշտապես ցուցաբերվող ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, նշեց, որ Հայաստանից հեռանում է գեղեցիկ հուշերով եւ վառ տպավորություններով:

Զրույցի ընթացքում խոսվեց Մերձավոր Արեւելքում տիրող ծանր իրավիճակի մասին, անդրադարձ կատարվեց հոգեւոր առաջնորդների՝ խաղաղության վերահաստատմանն ուղղած ջանքերին:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունն առ Աստված աղոթք բարձրացրեց, որ Տերն Իր խաղաղությունը հեղի ողջ աշխարհի եւ հատկապես Մերձավոր Արեւելքի վրա, որպեսզի տարածաշրջանում վերահաստատվի կյանքի անվրդով ու բնականոն ընթացքը:

Վերջում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց դեսպանին հետագա ծառայության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

«Վարդանանց ասպետներ» բարեգործական կազմակերպության անդամներին

6 հոկտեմբերի

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վարդանանց ասպետներ» բարեգործական կազմակերպության անդամներին:

Հանդիպմանը բարեգործական կազմակերպության անդամները Նորին Սրբությանը ներկայացրին Սփյուռքում ծավալած իրենց գործունեությունը՝ ուղղված Սփյուռքի հայկական դպրոցների եւ մանկապարտեզների աջակցությանը:

Ամենայն Հայոց Հայրապետը հայրենանվեր առաքելության իրագործման համար իր գնահատանքը հայտնեց բարեգործական կազմակերպության անդամներին՝ ընդգծելով, որ «Վարդանանց ասպետներ» կազմակերպությունը մշտապես կանգնած է եղել Հայ Առաքելական Եկեղեցու կողքին՝ բերելով անսակարկ աջակցություն եւ զորակցություն:

Վերջում Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով կազմակերպության անդամներին, մաղթեց երկարամյա արգասավոր գործունեություն եւ հայանպաստ նորանոր ծրագրերի իրականացում:

Սերգիեւ Պոսադի եւ Շաղվիո Շավանիոյի քաղաքապետերին

7 հոկտեմբերի

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էջմիածին քաղաքի տոնի առիթով Հայաստան ժամանած Սերգիեւ Պոսադ քաղաքի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Յուրի Պոտյակինին (ՌԴ) եւ Շաղվիո Շավանիոյի քաղաքապետ Ժերար Դեշամին (Ֆրանսիա)՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, գոհունակությամբ փաստեց, որ հայ-ռուսական եւ հայ-ֆրանսիական բարեկամական կապերը զարգանում են նաեւ քաղաքների միջեւ հաստատվող գործակցությամբ:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սերգիեւ Պոսադի եւ Շաղվիո Շավանիոյի խաղաղաշունչ

Սկիզբը՝ էջ 1

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությունը՝ ընդգծելով, որ այն դարեր շարունակ մշտապես քայլել է հայ ժողովրդի հետ՝ առաջնորդելով համայն հայության հոգեւոր կյանքը:

Իրենց հերթին՝ քույր քաղաքների ղեկավարներն ուրախություն հայտնեցին հայոց հոգեւոր կենտրոնում գտնվելու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանն արժանանալու համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

10 հոկտեմբերի — ՀՀ Սահմանադրության ընդունման 20-ամյակին եւ ՀՀ սահմանադրական դատարանի ստեղծման 20-ամյակին նվիրված երեւանյան միջազգային 20-րդ խորհրդաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց ՀՀ Սահմանադրության ընդունման 20-ամյակին եւ ՀՀ սահմանադրական դատարանի ստեղծման 20-ամյակին նվիրված երեւանյան 20-րդ միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ ՍԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանի:

Տիար Առուշան Հակոբյանն ընդունելության համար խորհրդաժողովի մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը եւ անդրադարձավ Հայ Եկեղեցու կարեւոր առաքելությանը ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով 20-րդ միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին, իր գնահատանքը բերեց դատական ատյանների սպասավորներին՝ իրենց գործունեության համար՝ ընդգծելով նրանց գործակցությունը հոգեւոր սպասավորների հետ համայն աշխարհում եւ հասարակական կյանքում արդարության եւ ճշմարտության հաստատման առաքելության մեջ: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ աշխարհում արդարության եւ ճշմարտության ամրապնդման խնդրին, հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտման համար հայ ժողովրդի պայքարին: Վեհափառ Հայրապետը շեշտեց այս մեծագույն արժեքների կարեւորությունը՝ ցեղասպանությունը, նման ոճիրներն ու ահաբեկչությունները մարդկության կյանքից բացառելու, խաղաղ, ապահով ու լուսավոր գալիք կերտելու համար:

Նորին Սրբությունը, վերստին հայրապետական գնահատանք բերելով արդարադատության ոլորտի ներկայացուցիչներին, նրանց մաղթեց նոր հաջողություններ իրենց կարեւոր ծառայության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

11 հոկտեմբերի — ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի շրջանի բժիշկներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի շրջանի բժիշկներին՝ ուղեկցությամբ Ֆրեզնոյում ՀՀ պատվո հյուպատոս Պերճ Աբգարյանի:

Պրն Պերճ Աբգարյանը, ներկայացնելով արհեստավարժ բժիշկներին, Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ նրանք ժամանել են Հայաստան՝ իրենց մասնագիտական հարուստ փորձառությամբ աջակցելու հատկապես Հայաստանի մարզերի բնակչությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց Մայր Աթոռ այցելած բժիշկների խմբին՝ ընդգծելով, որ վերջիններս օրհնյալ եւ աստվածահաճո առաքելություն են իրականացնում՝ առողջապահության ոլորտում իրենց անսակարկ ծառայությունը մատուցելով հայ ժողովրդի կարիքավոր զավակներին: Գարեգին Բ Հայրապետը մեծ գոհունակությամբ փաստեց այն, որ բժիշկների խումբը հոգալու է հատկապես մարզային բնակչության կարիքները:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործունեությանը՝ հյուրերին ներկայացնելով վերջին տարիներին հայ հասարակության մեջ բժշկական հաստատության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծու օգնականությունն ու զորակցությունը հայցեց նրանց պատասխանատու առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) գլխավոր քարտուղար տիկին Միկայել Ժանին:

Ողջունելով ՖՄԿ պատվիրակությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց ՖՄԿ գլխավոր քարտուղարին՝ Ֆրանկոֆոնիայի կազմակերպության եւ Հայաստանի միջեւ իրականացվող համագործակցային ծրագրերի համար:

Նորին Սրբությունը խորհրդանշական նկատեց, որ հայ ժողովրդի համար նվիրական՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման տարում ՖՄԿ-ն իր համաժողովը կազմակերպում է Հայաստանում՝ այդպիսով յուրօրինակ պատգամ հղելով մարդկությանը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ նմանօրինակ ոճրագործությունների կանխարգելման համար:

Վեհափառն անդրադարձավ նաեւ հայ եկեղեցու ունեցած կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում, ինչպես եւ այսօրվա ֆրանկոֆոնիայի մի շարք երկրների հետ միջնադարում հայության ունեցած սերտ աղերսներին: Այս առումով Նորին Սրբությունը ողջունեց արդի փոխգործակցությունը՝ վստահություն հայտնելով, որ այն երկուստեք կհարստացնի ՖՄԿ անդամակցող երկրներին:

Իր հերթին տիկին Մ. Ժանն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց Հայաստանում գումարված Ֆրանկոֆոնիայի 31-րդ նախարարական համաժողովի արձանագրած արդյունքները, ՖՄԿ առաջիկա անելիքները եւ հրամայականները: ՖՄԿ գլխավոր քարտուղարը կարեւորեց համընդհանուր ջանքերի միավորումը՝ հանուն մարդկային կյանքում առկա խնդիրների կարգավորման եւ մարտահրավերների հաղթահարման՝ դրանում էական նկատելով նաեւ մշակույթների եւ կրոնների երկխոսությունը:

Անդրադարձ եղավ Մերձավոր Արեւելքում տեղ գտնող ողբերգական զարգացումներին, մասնավորապես քրիստոնյաների ծանր վիճակին, խոսվեց նաեւ հոգեւոր առաջնորդների կողմից գործադրվող խաղաղասիրական ջանքերի մասին: *«Մենք դատապարտում ենք կրոնի շահարկումը քաղաքական նպատակներով: Պատերազմ, ատելություն եւ անհանդուրժողականություն քարոզող կրոն գոյություն չունի: Բոլոր կրոնները քարոզում են սեր եւ խաղաղություն: Այդուհանդերձ՝ այսօր տեսնում ենք, որ կրոնական ծայրահեղական շարժումների պատճառով մարդկային կյանքում աղետներ են տեղի ունենում»,*- նշեց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Լիբանանի Հանրապետության մշակույթի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Հանրապետության մշակույթի նախարար Ռոնի Արայջիին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց նախարարին՝ գոհունակությամբ ընդգծելով այն սերտ համագործակցությունը, որ մշտապես առկա է Լիբանանի եւ Հայաստանի միջեւ: Նորին Սրբությունը կարեւորեց նաեւ Լիբանանի իշխանությունների եւ ժողովրդի կողմից հայկական համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգածու վերաբերմունքը, որով հատկանշվում է երկու բարեկամ ժողովուրդների դարավոր եղբայրական ոգին:

Իր հերթին մշակույթի նախարարն ընդգծեց, որ մեծ պատրաստակամությամբ եւ սիրով է համագործակցում հայ համայնքի հետ: Պրն Արայջին անդրադարձավ նաեւ Լիբանանի մշակութային կյանքում հայկական համայնքի բերած կարեւոր ներդրմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Լիբանանի մշակույթի նախարարը մտահոգությամբ անդրադարձան Մերձավոր Արեւելքում տիրող ծանր կացությանը: Այս առիթով Նորին Սրբությունը մաղթեց, որ Ամենակալ Աստծու ողորմությամբ խաղաղությունը վերահաստատվի տարածաշրջանում, եւ մարդիկ շարունակեն ապրել իրենց խաղաղ ու անվրդով կյանքով:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Օծվեց Մասիս քաղաքի Ս. Թադեոս նորակառույց եկեղեցին

Հոկտեմբերի 4-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, կատարվեց Մասիս քաղաքի նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, եկեղեցու բարերարներ Միքայել եւ Կարեն Վարդանյանները, թեմի հոգեւոր սպասավորներն ու երիտասարդական միության անդամները:

Օծման արարողության ընթացքում շարականների եւ սաղմոսների ներքո ջրով եւ գինով լվացվեցին եկեղեցու ս. Սեղանը, սյուները եւ մկրտության ավազանը: Այնուհետեւ «Հրաշափառի» ներքո խորան բարձրացվեց սրբալույս Մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց եկեղեցու ս. Սեղանի օծումը:

Ձեռամբ Նավասարդ, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ, Մայր Աթոռի լուսարարապետ Հովսեփ եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան սրբազանների՝ օծվեցին եկեղեցու խորանի սյուները, մկրտության ավազանը եւ խորանի շուրթը:

Այնուհետեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ նորակառույց եկեղեցին կոչվեց Ս. Թադեոս առաքյալի անունով:

Հավարտ եկեղեցու օծման՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ու հայրապետական օրհնությունը բերեց ներկաներին.

«Հոգեւոր ուրախության զգացումներով ենք այսօր համակված ամենքս: Առ Քարձրյալն Աստված փառաբանությամբ, ձեզ հետ միասնական աղոթակցությամբ կատարեցինք օծումը Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցու:

Սբ Էջմիածնի տոնին նվիրված գեղեցիկ շարականն արտահայտում է սբ Գրիգոր Լուսավորիչ Հայոց առաջին Հայրապետի կոչը. «Եկայք շինեսցուք սուրբ գիսորանս լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»: Նոր եկեղեցիների կառուցումն իրագործումն է այս կոչի՝ դառնալով ոգեւորություն եւ խրախույս մեր կյանքում՝ վառ պահելու հավատքի լույսը, ապրելու բարեպաշտությամբ, գործելու Աստծո կամքի համաձայն: Նորակառույց եւ գեղեցկակերտ այս եկեղեցին կրում է սբ Թադեոս առաքյալի անունը, որին շարականագիրը կոչում է «Հայրատունկ այգու հրեղեն պարիսպ, ոսկեղեն բաժակ, ժիր մատռվակ եւ Հայաստանյայց հոգեւոր հայր»: Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալները քրիստոնեության լույսը բերեցին Հայաստան եւ Տիրոջ կենարար շնորհներին արժանի դարձրեցին մեր ժողովրդին: Օրեր առաջ սբ Մյուռոնի օրհնության արարողությանը Մենք հիշատակեցինք, որ Թադեոս առաքյալի ձեռամբ է Հայաստան բերվել Քրիստոսի օրհնած լույսը, որի զորությունը հաղորդվում է մեր սրբալույս Մյուռոնին, եւ որով այժմ կատարեցինք օծումն այս եկեղեցու: Թադեոս առաքյալի՝ մեր ժողովրդին մատուցած սպասավորության հիշատակները, հիրավի, մշտարթուն կլինեն նաեւ Քրիստոսի հավատարիմ աշակերտի անունը կրող եկեղեցում եւ այս եկեղեցի այցելող հավատացյալների սրտերում:

Սիրելինե՛ր, հավատքը կենդանի եւ զորավոր է Քարձրյալն Աստծո հետ աղոթական հաղորդակցությամբ: Իր ամենակարողությամբ Աստված ամենուր է՝ երկնքում եւ երկրի վրա, սակայն աստվածային հոգեպարար ներկայությունը զգալի է հատկապես Տիրոջը նվիրված սրբագործյալ տաճարներում: Այս իրողությունն է ուսուցանում Դավիթ մարգարեն սաղմոսի միջոցով՝ ասելով. «Տէր ի տաճար սո՛ւրբ Իւրում. Տէր յերկինս յաթոռ Իւրում (Տերն Իր սուրբ տաճարում է, Տերը երկնքում է՝ Իր գահի վրա)» (Սաղմ. Ժ 5):

Եկեղեցին Աստծո տունն է, պաշտամունքի սրբազան վայր, որտեղ հանդիպում են երկինքն ու երկիրը, ժամանակավորն ու հավիտենականը, եւ որտեղ մարդը ներթափանցում է հավերժության խորհրդի մեջ, այնտեղ ստանում նաեւ պարգեւը հավիտենական կյանքի: Մեր Տիրոջ եւ Փրկչի շնորհները հեղվում են հավատացելոց վրա՝ եկեղեցիների օրհնյալ հարկից ներս սուրբ եւ անմահ Պատարագի, սրբազան արարողությունների մատուցմամբ: Եվ եկեղեցու սուրբ Սեղանից բաշխվող հոգեւոր պարգեւներով զորանալով՝ մեր ժողովրդի զավակները երկնային աջակցությամբ արդյունավորում են իրենց կյանքի ընթացքն աստվածահաճո գործերով: Գովելի է, որ եկեղեցաշեն բարերարները, ընդառաջ մեր ժողովրդի հոգեւոր պահանջի, կյանքի են կոչում նոր աղոթավայրերի, օրհնության նվիրական հարկերի, լուսո սուրբ խորանների կառուցումը»:

Ս. Թադեոս եկեղեցու օծման առիթով Վեհափառ Հայրապետն իր բարձր գնահատանքը բերեց Վարդանյան ընտանիքի անդամներին, որոնց շնորհիվ Մասիս քաղաքում հոյակերտ եկեղեցի հառնեց:

Վերհիշելով եկեղեցու հիմնարկեքը, որին ներկա էր նաեւ եկեղեցու բարերարը՝ բարեհիշատակ Հրանտ Վարդանյանը, Նորին Սրբությունը հավելեց, որ հավատացյալ հայորդիներն իրենց աղոթքներում մշտապես պիտի հիշեն նրան՝ Տիրոջից խաղաղություն ու հանգստություն հայցելով նրա լույս հոգու համար:

Հայոց Հովվապետը գովելի սպասավորության իրականացման, թեմում հոգեւոր-եկեղեցական կյանքն աշխույժ պահելու եւ նման եկեղեցաշեն ձեռնարկներն ու բարերարությունները խրախուսելու համար իր գնահատանքը հայտնեց Արարատյան հայրապետական թեմի հոգեւոր դասին՝ գլխավորությամբ առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի:

Գարեգին Բ Վեհափառը ողջունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ պետական այրերի ներկայությունը սրբազան արարողությանը՝ հայցելով Աստծո գորակցությունը նրանց հայրենանվեր առաքելության մեջ:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց նաեւ եկեղեցու ճարտարապետ Անահիտ Թարխանյանին եւ շինարարներին:

Գնահատելով Վարդանյան ընտանիքի եկեղեցանվեր նպաստը՝ ի շինություն եւ ի պայծառություն հոգեւոր-եկեղեցական կյանքի, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան շնորհեց Միքայել եւ Կարեն Վարդանյաններին: Հայոց Հայրապետը մաղթեց, որ Տերը հաջողություններ շնորհի բարեպաշտ Վարդանյան ընտանիքի ազգօգուտ, հայրենասեր գործերին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթեց, որ Աստված խաղաղության մեջ նոր առաջընթաց ու շինություն պարգեւի հայրենիքին, պահի ու պահպանի հայ ժողովրդին՝ առաջնորդելով դեպի նոր ձեռքբերումներ:

Նորին Սրբությունը նաեւ մաղթեց, որ Տերը սբ Թադեոս առաքյալի բարեխոսությամբ Իր օրհնության ներքո պահի Մասիսի նորակառույց եկեղեցին եւ Առաքելական Սբ Եկեղեցու զավակներին՝ նորանոր հաջողություններ շնորհելով ազգանվեր ու եկեղեցանվեր բոլոր գործերին ու նախաձեռնություններին:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը տաճարին նվիրեց Տեր Հիսուս Քրիստոսի խաչելության սրբապատկեր:

Ս. Թադեոս եկեղեցու օծման արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, Մասիսի քաղաքապետ Սաշա Հակոբյանը եւ բարեպաշտ բազում հայորդիներ:

Անգլիկան-Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների աստվածաբանական երկխոսության հանձնախմբի 4-րդ նիստը

Հոկտեմբերի 5-10-ը Ուելսի (Մեծ Բրիտանիա) Լորդ Գլադստոնի անվան գրադարանում տեղի ունեցավ Անգլիկան-Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային աստվածաբանական հանձնախմբի հերթական նիստը: Թվով չորրորդ այս նիստը (առաջինը տեղի էր ունեցել 2002 թվականին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում) նվիրված էր Անգլիկան եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների ավանդությունների մեջ Սբ Հոգու դերի եւ աստվածաբանական նշանակության ընկալմանը:

Հանձնախումբը, ներկայացված աստվածաբանական զեկույցների ու բանախոսությունների հիման վրա, մոտ ապագայում նյութի շուրջ լույս կընծայի միջեկեղեցական փաստաթուղթ:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից միջազգային աստվածաբանական հանձնախմբի նիստին իրենց մասնակցությունը բերեցին ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովսեփ արք. Տերտերյանը (Մայր Աթոռ Սբ Էջմիածին), Նարեկ արք. Ալեմեզյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն), Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Հուսիկ ծ. վրդ. Մարտիրոսյանը:

Հոգեհանգիստ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանի համար

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Երուսաղեմի Հայոց հոգեւորականը Պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանի մահվան 3-րդ տարելիցի առիթով հայր սուրբն իր քարոզում հրավիրեց ներկաներին աղոթքով հիշելու Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավորին:

Ս. Պատարագի ավարտին կատարվեց մասնավոր հոգեհանգստյան արարողություն՝ երջանկահիշատակ Թորգոմ Պատրիարքի հոգու խաղաղության համար:

Եկեղեցականների նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կառույցներում եւ Հայոց Եկեղեցու թեմերում կատարվել են հոգեւոր սպասավորների նոր նշանակումներ: **Մարկոս քհն Մանգասարյանը**, ազատվելով Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանատանը ստանձնած պարտականություններից, նշանակվել է Մայր Աթոռի սոցիալական ծառայության տնօրեն, **Սերովբե վրդ. Խաչանյանը**, ազատվելով Հոլանդիայում Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդի պաշտոնից, նոյեմբերի 1-ից ծառայության է անցնելու Գերմանիայի հայոց թեմում, **Առեն վրդ. Շահենյանը**, ազատվելով Մեծ Բրիտանիայի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, նոյեմբերի 1-ից իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Հոլանդիայի հայոց եկեղեցական համայնքներում՝ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի իշխանության ներքո:

Դիվանատան Եկեղեցական-ժողովական կառույցների գրասենյակի տնօրեն է նշանակվել **Արսեն քհն. Միրզոյանը:**

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

695 թվականի Կոստանդնուպոլսի գրադարանի մի եզակի վավերագիր

[redacted]հաբական խալիֆայության հարվածների տակ նախկին Արեւելա-[redacted]հոմեական տիեզերական կայսրությունից VII դարի վերջին Բյուզանդիայի կազմում (որ կոչվում է այժմ Ռումանիա) մնացել էին հազիվ միայն Փոքր Ասիան եւ Հունաստանը:

Հռոմայեցիների (հայկական աղբյուրներում՝ հոռոմոց) տերության երբեմնի տիեզերական փառքի վկայություններն էին սոսկ Կոստանդնուպոլսի տիեզերական մայրաքաղաք հորջորջումը եւ V դարի առաջին կեսի եկեղեցական պատմագիր Սոկրատ Սքոլաստիկոսի հունարեն «Եկեղեցական պատմությունը», որի մեջ հիշատակվում էր Կ. Պոլսին՝ Կոստանդին կայսեր դեռ 324 թ. շնորհած «Երկրորդ Հռոմ» կամ «Նոր Հռոմ» անունը. դրանով իսկ վավերացվում էր Ռումանիայի պատմության փառավոր սկիզբը, իսկ Սոկրատը ճանաչվում էր նրա առաջին պատմագիր: Ուստի Սոկրատի Պատմությունը շատ հարգի էր հռոմայեցիների երկրում, իսկ նրա թարգմանությունը որեւէ երկրի լեզվով՝ մոլագար Հուստինիանոս Բ կայսեր համար համազոր էր Ռումանիայի գերիշխանությունը ճանաչելուն: Այս պատճառով նա հարկադրեց կաթողիկոս Սահակ Ձորափորեցուն, ով իր հինգ եպիսկոպոսների հետ գերի էր տարվել Կ. Պոլիս, մասնակցելու 692 թվի Տրուլլի քաղկեդոնական դավանաբանական ժողովին, որպեսզի հունագետ թարգման Փիլոն Տիրակացին պատանդ մնա Կ. Պոլսում՝ Սոկրատի Պատմությունը թարգմանելու, իսկ կաթողիկոսին թույլ տվեց վերադառնալ Հայաստան՝ խափանելու համար «հինքնակոչ» հայոց իշխան Սմբատ Բագրատունու դաշինքն արաբ խալիֆ Աբդ ալ-Մալիքի հետ:

695 թվականին նոր կայսր Լեւոն II-ի թույլտվությամբ Փիլոն Տիրակացին Կոստանդնուպոլսից վերադարձավ Հայաստան՝ իր հետ բերելով Սոկրատ Սքոլաստիկոսի հունարեն «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանությունը եւ մայրաքաղաք Դվինում այն հանձնեց Սահակ Ձորափորեցի կաթողիկոսին: Թարգմանության անվանաթերթին կար հետեւյալ հիշատակարանը. *«Յամի վեց հազար երրորդի երկերիւր երրորդի չորրորդի կենցաղումս անցաւորի որպէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպոլսի... Յետոյ հարիւրերորդի չորրորդի Քրիստոսի գալստեանն, եւ ի հարիւր քառասուն եւ ի չորս թուականին. ի յիններորդումն Ընդիքտիոնին յառաջնում ամի թագաւորութեանն Երիցորդ Ղեւոնի Ինքնակալի աւգոստոսի...*

Թարգմանեաց Փիլոն Տիրակացի առաջին ձեռնարկութեամբ զգիրսն զայս մասնաւոր ծայրաքաղ խարարեալ - Ա. Մ.] ի Սոկրատայ Եկեղեցական պատմութենէն...»:

Մինչ այժմ ուսումնասիրողներն առանձնակի նշանակություն չեն տվել այս վավերագրի սկզբում տրված թվականներին. դրանց մասնակի անդրադարձել է Ն. Ադոնցը՝ մատնանշելով, սակայն, որ աշխարհի արարչագործության Ալեքսանդրյան տոմարը եւ Քրիստոսի գալստյան թվականը ուշ է գործածվել նույնիսկ եվրոպական ժամանակագրության մեջ, եւ որ դրանք հետագայում պատահաբար են հայտնվել Փիլոնին վերագրվող հիշատակարանում: *«Փիլոնի բուն հիշատակարանները չեն պահված,- մատնանշում է պատմաբանը,- այլ հետին գրիչներից մեկը ամփոփել է նրանց բովանդակությունը, եւ իր կողմեն ավելացրել է Քրիստոսի գալստյան թվականը Ալեքսանդրյան տոմարով՝ հակառակ Փիլոնի գործ ածած Կոստանդնուպոլսի տոմարի»*: Անծանոթ գրիչն Ալեքսանդրյան տոմարով (5500 տարի) ստացել է Քրիստոսի գալստյան 704 թվականը, որը, ըստ Ադոնցի, պետք է լիներ 696՝ Կոստանդնուպոլսի 5508 տոմարի դեպքում:

Իմ մեկնաբանումը միանգամայն այլ է՝ մինչ այժմ տրված բոլոր բացատրություններից... Ըստ իս՝ դա ոչ թե Փիլոնի հիշատակարանն է, այլ՝ Բյուզանդիայում ընդունված վաղ միջնադարյան գրադարանային գործի մի հազվագյուտ վկայական կամ հավաստագիր, որին կցվել է նաեւ տեղեկանք՝ բնագրի համեմատ թարգմանչի թույլ տված եւական շեղումների մասին... Կ. Պոլսի գրադարանում Սոկրատի թարգմանությունն ավարտելու առթիվ գրադարանի տեսուչը, ընդունված կարգի համաձայն, Փիլոն Տիրակացուն հանձնել է հունարեն հավաստագիր առ այն, որ նա Սոկրատի թարգմանությունն ավարտել է 695 թվականին՝ տարեթիվը նշելով Բյուզանդիայում ընդունված աշխարհի արարչագործության եւ Քրիստոսի գալստյան (ոչ թե հայտնության - Ա. Մ.) տոմարներով, որին հաջորդում է հայոց 144 (695) թվականը (նշվում էր այն երկրի տոմարը, որտեղից ժամանել էր գրադարանի այցելուն). ինչպես եւ Ինդիկտիոնի ինսներորդ տարում՝ Լեւոն Բ ինքնակալ Օգոստոս կայսեր գահակալության առաջին տարին: Յուրաքանչյուր պաշտոնական թուղթ կամ իրադարձություն թվագրելիս պարտադիր նշվում էր իշխող բյուզանդական կայսեր գահակալության տարին՝ Ինդիկտիոնի տվյալ տարվա հաշվարկով...



Ինդիկտիոնը հունարեն Ձատկական ժամանակագրության մեջ ամրագրված գլխահարկի 15-ամյա շրջափուլ էր, որով պատմական ժամանակաշրջանը դիտվում էր իբրեւ 15-ամյա սերունդների հարաճուն շղթա՝ սկիզբը հաշվելով Կոստանդիանոս Ա կայսեր Օգոստոս ինքնակալ հռչակվելու առաջին տարուց՝ 312 թվականի մարտի 21-ից... Այսպես՝ Լեւոն Բ ինքնակալ Օգոստոս կայսեր գահակալության առաջին տարին որված է Ինդիկտիոնի ինսներորդ տարում՝ 311+25x15+9 տարի=695 թ.:

Հակառակ Ն. Ադոնցի դիտողության՝ թե «Քրիստոսի գալստյան թվականը գործածական չէր ոչ միայն Փիլոնի ժամանակ, այլեւ հետագա դարերում», այժմ, VIII դարի բյուզանդական ժամանակագիր Թեոփանես Խոստովանողի հունարեն «Chronographia» («Ժամանակագրություն») պատմական երկը ներգրավելով, ցույց կտամ, որ մեր վավերագրում ոչ մի թվային աղավաղում չկա:

695 թվականի հայերեն վկայականում պահպանված տիեզերական մայրաքաղաք Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա Մեծ եկեղեցու տոմարի եւ բյուզանդական ժամանակագիր Թեոփանես Խոստովանողի (VIII դար) օգտագործած տոմարի բաղդատումից բխում են կարեւոր տոմարային եւ պատմական եզրահանգումներ, որոնք առաջին անգամ են ներկայացվում հայ եւ օտարազգի բյուզանդագետների ուշադրությանը: Հիրավի, զարմանքի արժանի է տարեթվերի այն հարաբերակցությունը, որն առկա է միմյանց հետ ոչ մի կապ չունեցող երկու վաղեմի գրավոր աղբյուրներում:

Թեոփանեսի «Ժամանակագրություն»-ը հաստատում է, որ մեր ձեռքը հասած Կ. Պոլսի գրադարանի հայերեն վկայականում նշված թվականները միանգամայն համեմատելի են VII դարավերջի բյուզանդական պաշտոնական ժամանակագրությանը: Մեր վկայականում այդ ժամանակագրությունը կոչված է՝ «Տիեզերական մայրաքաղաք Կոստանդնուպոլսի Սուրբ Սոփի աւագ եկեղեցու կենցաղում անցաւորի ժամանակագրութիւն»: Հունարեն հավաստագիրը կամ վկայականը պարունակել է իսկական որոգայթ՝ բյուզանդական քաղկեդոնիկ ոգով: Աշխարհի արարչագործության ոչ մի ժամանակագրության մեջ չի նշվում «կենցաղումս անցաւորի» արտահայտությունը: Ըստ իս՝ այս բառերը հունարեն վկայականում վերաբերել են Քրիստոսին... Քանի որ Բյուզանդիայում, քաղկեդոնական ուսմունքի համաձայն, Քրիստոսն ուներ երկու բնություն՝ աստվածային եւ մարդկային, ուստի Մարիամ Կույսից ծնվելով՝ Քրիստոսը դարձավ «կենցաղումս անցաւոր», այն է՝ սովորական մահկանացու:

Շարունակությունը՝ էջ 7



Սկիզբը՝ թիվ 8-9, 16

[redacted]

Ինչպես լուծվեց անսովոր վեճը, եւ Ալեքսանդրիայում ինչ վճիռ կայացվեց

Այն Ալեքսանդրիայում, որ Հռոմեական կայսրության մեջ էր,- տասներկու Ալեքսանդրիա կա, որոնք հիմնել է Ալեքսանդրը մարտ ամսին՝ իր մահից առաջ,- կան փողոցներ, ուր սարակինոսներն են ապրում եւ տարբեր ուտեստներ են վաճառում: Մարդիկ այդտեղ են գնում ընտրելու որակյալ ու նուրբ կերակուր, ինչպես մեզանում մահուդ են ընտրում:

Մի երկուշաբթի Ֆաբրատ անունով խոհարարն իր խոհանոցից նկատեց, որ իրեն է մոտենում մի աղքատ սարակինոս՝ հացի պատառը ձեռքին: Նա կերակրի դրամ չուներ: Խեղճը հացը պահեց կաթսայի գոլորշու վրա եւ հագեցրեց ճաշից ելնող շոգիով, ապա սկսեց հացը խժռել եւ կերավ ամբողջը:

Այդ առավոտ Ֆաբրատի առեւտուրը վատ ընթացավ, նա մտածեց, որ սարակինոսն իրեն աչքով է տվել. եւ հարձակվեց խեղճ սարակինոսի վրայ՝ ասելով. «Վճարի՛ր այն բանի համար, որ ինձնից վերցրիր»:

Աղքատը պատասխանեց. «Ես քեզնից բան չվերցրի, բացի շոգիից»:

«Հենց դրա՛ համար վճարիր»,- ասաց Ֆաբրատը:

Եվ նրանք այնպես վիճեցին, որ այդ արտառոց վեճի համբավը հասավ սուլթանին: Այդպիսի չլսված գործի համար նա հավաքեց իր իմաստուններին, մարդ ուղարկեց վեճի մասնակիցների ետեւից, որոշեց դատել նրանց:

Սարակինոս իմաստունները ձեռնամուխ եղան նրբամիտ ապացույցների: Ոմանք պնդում էին, թե գոլորշին խոհարարին չի պատկանում, եւ բերում էին շատ կռվաններ: «Գոլորշին հնարավոր չէ պահել, այն վերածվում է բույրի, դա առարկայական չէ, եւ դրանից ոչ մի օգուտ չկա, եւ ուրեմն՝ վճարելի չէ»:

Ուրիշներն ասում էին. «Գոլորշին կերակուրի մի մասն է, որից կախված է, որից առաջանում է, հետեւաբար վաճառվում է ճաշի հետ: Եվ եթե հումքը փոքր է, պետք է քիչ վճարել: Ավելին. ով այն յուրացնում է, պիտի վճարի»:

Այդ մասին շատ վիճեցին: Ի վերջո իմաստունի մեկն այսպիսի որոշում կայացրեց. «Մի մարդ վաճառում է այն, ինչ արտադրել է ինքը, մյուսը գնում է: Թող նա, որ վաճառում է, արդարացիորեն ստանա իր տվածի գինը: Եթե խոհարարը վաճառում է իր եփածը, որը բերում է զգալի օգուտ, հարկավոր է վճարել ոչ պակաս զգալի գնով: Բայց այդ գոլորշին անզգալի մի բան է: Արքա, ասա՝ դրամը զնգացնեն, եւ հայտարարիր, որ շոգիի գինը բավարար է վճարել դրամի զնգոցով»:

Եվ անսալով այդ խորհրդին՝ սուլթանն այդպես վճռեց:

[redacted]

Թե ինչքան լավ դատեց Սկեավո Բարացին քաղաքավորին եւ ուխտավորին

Բարիի մի բնակիչ ուխտի ուղեւորվելիս իր բարեկամի մոտ թողեց 300 ոսկի բիզանտ՝ այսպիսի պայմանով ու պատգամով. «Ես ճանապարհ եմ ընկնում, եւ միայն Աստծուն է հայտնի՝ ինձ ինչ կպատահի: Եթե չվերադառնամ, դրանք տուր՝ իմ հոգուն հիշատակ, իսկ եթե վերադառնամ նշանակված ժամանակ, ինձ կտաս այնքան, որքան կամենում ես»:

Ուխտավորը մեկնեց, վերադարձավ նշանակված ժամանակ եւ խնդրեց իրեն տալ դրամները: Բարեկամը պատասխանեց. «Կրկնիր պայմանը»: Ուխտավորը կրկնեց ճշտությամբ: «Գերազանց,- ասաց բարեկամը,- ահավասիկ, վերցրո՛ւ, ես ուզում եմ քեզ վերադարձնել 10 դրամ, իսկ 290-ը պահում եմ ինձ»: Ուխտավորը վրդովված ասաց. «Դա անարդար է: Դու խաբեությամբ ինձնից խլում ես ունեցվածքս»: Իսկ բարեկամը քաղցր ձայնով պատասխանեց. «Ես ազնիվ եմ վարվում քեզ հետ, իսկ եթե ոչ՝ գնանք ատյան»:

Գործ հարուցվեց: Դատավորը բարացի Սկեավոն էր: Նա լսեց կողմերին: Քննություն արեց եւ այսպիսի վճիռ կայացրեց: Դրամը յուրացնողին նա ասաց. «Ուխտավորին վերադարձրու 290 դրամ, իսկ նա քեզ կտա այն 10 դրամը, որ դու իրեն ես վերադարձրել: Չէ՞ որ պայմանն այս էր. «Դու կտաս այնքան, որան կամենում ես»: Ուստի քո ցանկացած 290-ը տուր, իսկ այն 10-ը, որ չես ցանկացել, քեզ պահիր»:

[redacted]

Ինչպես բժիշկ Ջորդանոյին խաբեց նենգ աշակերտը

Ջորդանո անունով մի բժիշկ նենգ աշակերտ ուներ: Թագավորի որդին հիվանդացավ: Բժիշկը գնաց նրա մոտ, տեսավ, որ նա կարող է առողջանալ: Իսկ աշակերտը ցանկանում էր հեղինակազրկել ուսուցչին եւ հիվանդի հորն ասաց. «Տեսնում եմ, որ նա ստուգապես կմեռնի»:

Եվ վիճելով ուսուցչի հետ՝ գիտակի կեցվածքով հիվանդին ասաց, որ բաց անի բերանը եւ մատի ծայրով լեզվին թույն դրեց:

Հիվանդը մահացավ: Ուսուցիչը նկատեց ամեն ինչ, բայց կորցրեց վստահությունը, իսկ աշակերտը՝ ձեռք բերեց:

Այն ժամանակ բժիշկը երդվեց այլեւս որեւէ մեկին չբուժել՝ բացի ավանակներից, եւ այդ օրվանից բուժում էր միայն կենդանիներին ու անլեզու արարածներին:

[redacted]

Ամինադաբի՝ իր տեր Դավիթ թագավորին մատուցած ծառայության մասին

Դավիթ թագավորի զորապետ եւ խորհրդական Ամինադաբը նրա հրամանով մեծ բանակով ելավ փոշտացիների քաղաքներից մեկի դեմ:

Տեսնելով, որ քաղաքն այլեւս չի կարող դիմադրել եւ շուտով կընկնի՝ Ամինադաբը, պատճառաբանելով, թե իբր գինվորները կարող են ապստամբել, մարդ ուղարկեց՝ Դավիթ թագավորին խնդրելով, որ նա մեծ շքախմբով ժամանի իրենց մոտ:

Դավիթ թագավորն անմիջապես արշավ ձեռնարկեց:

Նա իր զորավար Ամինադաբին հարցրեց. «Ինչո՞ւ ես ինձ կանչել»:

Ամինադաբը պատասխանեց. «Մեսսե՛ր, քաղաքն այլեւս չի դիմանա պաշարումին, իսկ ես ուզում էի, որ հաղթության պատիվը ձեր անձին հասնի եւ ոչ ինձ»:

Այնուհետեւ նա շարժվեց եւ նվաճեց քաղաքը, իսկ պատիվն ու փառքը բաժին եղան Դավիթ թագավորին:

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎՀԱՆԵՍ ՇԻՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Թե մահից հետո հող պիտի դառնամ՝
Թող դառնամ սիրո ճամփեքին մոտիկ,
Որ սիրո համար նորից աշխարհ գամ՝
Հողից՝ դառնալով պայծառ մի ծաղիկ:
Եվ ինձ կքաղի պատանի մի նոր,
Կդրնի կրծքին սիրած աղջկա,-
Եվ համբույրի մեջ նրանց բախտավոր՝
Կզգամ, որ սիրո համար մահ չկա...

(**Շիրազ Հ.**, Հատընտիր, խմբագրությամբ Ս. Մուրադյանի, «Հայրապետ հրատ.», Եր., 2012, էջ 50):

Հովհ. Շիրազի սիրո քնարերգությունը նրա խոր մարդերգության եւ հզոր բանաստեղծական արվեստի դրսեւորումներից մեկն է եւ իր պատվավոր տեղն ունի համաշխարհային սիրերգության մեջ, ուստի պահանջում է համակողմանի քննություն եւ արժեւորում՝ գիտական ստույգ չափանիշներով: Բայց այն բնութագրելուց առաջ նախ պետք է պարզաբանենք մի հիմնախնդիր. սիրո քնարերգությունն առհասարակ մարդու անմնացորդ նվիրումն ու կամավոր ինքնազոհաբերումն արդարացնող ու արժեւորող, մարդու հոգին ազնվացնող ու վեհացնող, մարդու խորհրդավոր ներաշխարհի գաղտնարաններում մարդկայնորեն գեղեցիկը գնահատելու խնդի՞ր է, թե՞ սեռերի փոխադարձ ձգողության կամ բանաստեղծի եւ այս կամ այն էակի անձնական փոխհարաբերությունների արտացոլում:

Վերջին դեպքում չափազանց հասարակացրած ու աղքատացրած կլինենք ողջ համաշխարհային սիրերգությունը, եթե փորձենք այն դիտարկել որպես միայն այս կամ այն բանաստեղծի անձնական կյանքի պարզ արտահայտություն: Ասենք, որպես զուտ միայն Դանթեի ու Բեատրիչեի, Պետրարկայի եւ Լաուրայի, մեր հայրեններում պատկերված «կլուզելների», կանաչ հագած «խոշ յարերի» ու «մանկտի» կտրիճների, Սայաթ-Նովայի եւ նրա գոգալի կամ «մէ տարի բերած» «բեմուրվաթ» սիրեկան յարի, Հ. Հայնեի եւ Մաթիլդայի, Ֆ. Տյուտչեւի եւ նրա սիրած կանանց՝ Ամալյա Լերֆենեելդի, Էլեոնորա Պետերսոնի, Էռնեստինա Դերպբերգի կամ Ելենա Դենիսովայի, Պուշկինի ու Ելիզավետա Վորոնցովայի, Աննա Քեռնի, Լերմոնտովի ու նրա սերերի՝ Եկատերինա Սուշկովայի, Նատալյա Իվանովայի, Վառվառա Լոպուխինայի, Եկատերինա Բիխովեցի, Եսենինի եւ Տանյուշայի, պարսկուհի Լալայի կամ հայուհի Շահանեի, նաեւ այն անանուն աղջկա, որին երկրպագում էր բանաստեղծը՝

Սիրապատկերի քո դեմքը հպարտ՝
Շատ մատուռներում իմ ձեռքով կախվեց,-

անկեղծ խոստովանությամբ:

Այդպես եւ՝ Իսահակյանի ու նրա սերերի՝ մախմուր Չարոյի կամ Շուշանիկ Մատակյանի, Տերյանի եւ նրա սերերից որեւէ մեկի (Նյուրա, Եստոնուհի Ալինա Մագուր, Մարգո Շախաթունի, Սոֆյա Օթարյան, Սուսաննա Պախալյան, Անթառամ Միսկարյան, Նվարդ Թումանյան, Անահիտ Շահիջանյան), Չարենցի ու Կարինե Քոթանջյանի կամ մյուս կանանց (Աստղիկ Ղոնդախչյան, Լյուսի Թառայան, Արփենիկ Աստվածատրյան, Մարիանա Այվազյան, Իզաբելա Կոդաբաշյան), որոնց հավաքական սիրո բոլոր խորություններն ու նրբերանգները խտացված են «Նավզիկե» պոեմի առասպելական-երեւակայական հերոսուհու կերպարում եւ նրա հանդեպ հեղինակային վերաբերմունքը, «կարոտի կսկիծն» արտահայտող այրող խոսքում, Պ. Սեւակի եւ Սուլամիթայի զուտ անձնական փոխհարաբերությունների արտացոլում (որն, ի դեպ, հանիրավի շատ է չարաշահվել) եւ այլն, եւ այլն:

Ուրեմն, իսկապես, գաղտնիք չէ, որ սիրավեպ ստեղծվել է բոլոր բանաստեղծների եւ այն իրական գեղեցկուհիների միջեւ, ովքեր վճռական դեր են ունեցել նրանց կյանքում եւ համաշխարհային սիրերգության զարգացման մեջ:

Մի ճշմարտությունից խուսափել չենք կարող. վերոնշյալ կանայք այսօր հիշվում են բացառապես իրենց անմահացրած բանաստեղծների ստեղծագործական ոգեշնչման աղբյուրը լինելու հանգամանքով, որի համար էլ մարդկությունը պարտական է նրանց: Սակայն բոլոր դեպքերում մարդկային սերը՝ որպես հոգեբանական ու փիլիսոփայական հասկացություն, հույժ անձնական աղբյուրից բխելով, գեղագիտական առումով վեր է ամեն տեսակի անձնականությունից, ավելի խոր ու ընդգրկուն, ավելի համապարփակ երեւույթ, ավելի համամարդկային արժեք է, քան ցանկացած երկուսի զուտ անձնական փոխհարաբերությունների սոսկական պատկերումը, որովհետեւ առաջնայինը գեղարվեստական որակի խնդիրն է, իսկ այն ձեռք է բերվում անձնականը ընդհանրացնելով հանրայնացնելու՝ բոլորինը դարձնելու աստվածային կարողությամբ, որ հազվագյուտ քչերին է տրված:

Այդ «քչերն» են միայն ի վիճակի իրենց բանաստեղծական ընկալմամբ ու վերարտադրելու կարողությամբ մարդկային հոգիներում բացահայտելու նախորդների կողմից անանկատ մնացած զգացմունքների նորանոր հոսքեր ու նրբերանգներ: Այսպես է ձեւավորվում բովանդակային նորարարությունը:

Ուրեմն, իսկապես, կանանց անունները որքան իրական, նույնքան էլ պայմանական են: Նրանք՝ այդ սիրելի կանայք են հարուցում այն բյուրեղյա ու մաքրամաքուր, վեհացնող ու ազնվացնող զգացմունքները, որոնք բանաստեղծին մղում են ինքնարտահայտմամբ համայնացնելու աստվածային այդ բարիքը՝ սերը, որ ամեն ընթերցող իրենն է համարում՝ բարձր արվեստի շնորհիվ: Եվ ճշմարիտ բանաստեղծի համար էականը, մարմնական գեղեցկության պատկերման հետ միասին ու դրանից ավելի, մարդուն վսեմացնող սիրո զգացմունքը համակողմանիորեն ներկայացնելն է, թե՛ իր եւ թե՛ սիրած էակի ներաշխարհում մարդկայնորեն գեղեցիկի հոգեբանական նուրբ ու խոր բացահայտումը: Իսկ սա, սուբյեկտիվությամբ հանդերձ, թեեւ անհատի միջոցով դրսեւորվող, սակայն զուտ ներանձնական կամ անհատական բնույթ չի կրում: Համենայն դեպս՝ գոնե ռուս գրականագիտությունն այս դիտանկյունով է մեկնաբանում Պուշկինի, Լերմոնտովի, Տյուտչեւի, Եսենինի սիրո քնարերգությունը:

Տարբեր չէ եւ Հովհ. Շիրազի ու նրա սերերի պարագան. այս դեպքում էլ մեզ առավել հետաքրքրում է ոչ այնքան մանկապատանեկանից մինչեւ հասուն տարիք նրա սերերի «պատկերասրահը», որքան այն, թե նրանցից ստացած ներշնչումով գեղարվեստական ինչ երկեր է ստեղծել բանաստեղծը եւ ինչ որակով:

Հետեւյալ բանաստեղծության մեջ, օրինակ, անձնականության նշույլն անգամ չկա, ընդհակառակը, մեծարենցյան համամարդկային, ինչպես ինքը կասեր՝ «Եսին տաղտկալի ոչնչաբանությունից» միշտ վեր՝ «անանձնական ուրախության» կամ «համաշխարհիկ բաբախումների» տրոփն է լսելի՝ նոր շարունակականության եւ սերունդների համար էլ կյանքը սիրով գեղեցկացնելու, սիրո հավիտենականության համար զոհաբերվելու՝ բոլորի երջանիկ սիրո համար հող դառնալու պատրաստ բանաստեղծի գերազնիվ տենչանքի մեջ.

Վերջիվերջո, բանաստեղծների եւ նրանց սերերի բոլոր հարաբերությունների մեջ, յուրաքանչյուրի անհատական տարբերություններով հանդերձ, մի ընդհանուր բան կա, որը բոլորին միավորում է մեկ միասնական համակարգի ու հարահոսի մեջ: Դա մարդուն վեհացնելու, սիրելի ու պաշտելի դարձնելու արվեստն է:

Վերընթերցենք դասական սիրահարների սիրային բանաստեղծություններն ու նամակները եւ կհամոզվենք, որ նրանց մեջ նույն կարոտի ու սպասման տագնապներն են, գեղեցիկի բացարձակացման եւ մարդու աստվածացման, աշխարհի բոլոր գեղեցկուհիներից նրան՝ այդ մեկին ու «միակին» բացառիկացնելու, «դյութական փայլով պճնելու» եւ մյուսներից գերադասելու, սիրած էակին առանձնահատուկ կարեւորություն տալու, գեղեցկությանն ու քնքշությանը նույն ինքնամոռաց նվիրումի եւ հավատարմության երդումներն են՝ հավերժական սիրո խոստումներով ու հավաստիացումներով: *Շարունակությունը՝ էջ 8*

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 18

Ստեղծագործության մեջ կան երկու տարբեր կողմեր, երկու տարբեր գործոններ, եւ կախված այն բանից, թե մենք ստեղծագործության որ կողմին ենք կենտրոնացած, ըստ այդմ էլ նկարագրում ենք այն: Ստեղծագործությունն ունի ներքին ու արտաքին կողմեր: Գոյություն ունի սկզբնական ստեղծագործական գործոյթ, որում մարդն ասես կանգնած է Աստծո առջեւ, եւ կա երկրորդական ստեղծագործական գործոյթ, որում նա ասես կանգնած է մարդկանց ու աշխարհի առջեւ: Կա առաջնային ստեղծագործական ներըմբռնում՝ արվեստագետի ստեղծագործական մտահղացումը, երբ նրան սիմֆոնիա է հնչում, նրա առջեւ կանգնում է գեղանկարչական պատկերը եւ կամ քնարական կերպարը, ներքին, դեռեւս չարտահայտված հայտնագործումը եւ գյուտը, մարդու հանդեպ սիրո ստեղծագործական ներքին գործոյթը՝ կրկին ոչնչով դեռեւս չարտահայտված: Այդ ստեղծագործական գործոյթում մարդը կանգնած է Աստծո առջեւ եւ դեռեւս զբաղված չէ մարդկանց համար աշխարհի իրացմամբ: Եթե ինձ տրված է իմացություն, ապա այդ իմացությունը առաջին հերթին իմ գրած գիրքը չէ եւ ոչ էլ մարդկանց համար ձեւակերպված գիտական հայտնագործություն՝ ի մտից մարդկային մշակույթ: Դա առաջին հերթին իմ ներքին իմացությունն է՝ դեռեւս անծանոթ աշխարհին, աշխարհի համար չարտահայտված, դեռեւս նվիրական: Եվ դա լոկ իսկական առաջնային իմացությունն է, իմ իսկական փիլիսոփայությունը, երբ ես կանգնում եմ գոյության խորհրդի առջեւ դեմ առ դեմ: Հետո գալիս է երկրորդական ստեղծագործական գործոյթը՝ կապված այն բանի հետ, որ մարդը սոցիալական գոյություն է, ստեղծագործական արգասիքի իրացում: Գիրք է գրվում: Եվ այստեղ ի հայտ է գալիս այն, ինչը ստեղծագործության մեջ հանդիսանում է վարպետություն, արվեստ: Առաջնային ստեղծագործական գործոյթն ամենեւին արվեստ չէ: Արվեստը երկրորդական է, եւ նրանում ստեղծագործական կրակը սառչում է: Ուզածդ արվեստ ենթարկվում է օրենքի, եւ նրանում գործում են շնորհն ու ազատությունը, ինչպես եւ առաջնային ստեղծագործական գործոյթում: Ստեղծագործական արգասիքի իրացման ժամանակ մարդն արդեն կապված է աշխարհի հետ, աշխարհի նյութականության հետ, կախված է այլ մարդկանցից, նա այլեւս հուլացած ու չափավորված է: Եվ միշտ առկա է ողբերգական անհամապատասխանություն ստեղծագործական տոչորումի, ստեղծագործական կրակի, որում ծնունդ է առնում ստեղծագործական մտահղացումը, ներըմբռնումը,

կերպարը, եւ ստեղծագործության օրինադրական իրացման ընդարմացումի միջեւ: Ուզածդ գրքում, նկարում, արձանում, բարի գործում, սոցիալական հիմնարկում գոյություն ունի սառեցում, կրակի մարում: Հավանաբար աշխարհում եղել են եւ կան արարողների չարտահայտված մնացուկներ, արարողներ, որոնք ունեցել են ներքին կրակ եւ ներքին ստեղծագործական գործոյթ, որոնք սակայն չեն իրացվել, չեն դարձել արդյունք: Միջդեռ մարդիկ ստեղծագործություն են կոչում ընդարմացած արտադրանքի ստեղծումը: Ստեղծագործական կիրքը, ստեղծագործական թռիչքը մշտապես ուղղված է նոր կյանքին, նոր գոյության ստեղծմանը, սակայն արդյունքում ստացվում է մշակույթի ընդարմացած արդյունք՝ մշակութային արժեքներ, գրքեր, նկարներ, հիմնարկություններ, բարի գործեր: Չէ որ բարի գործերը եւս սիրո կրակի ստեղծարար պաղեցումն է մարդկային սրտերում, ինչպես փիլիսոփայական գիրքն է իմացության ստեղծագործական պաղեցումը՝ մարդկային ոգու: Դրանում է ստեղծագործության ողբերգությունը եւ սահմանը մարդկային ստեղծագործության: Այդ ավարտի մեջ է մարդկային ստեղծագործության ահեղ դատաստանը: Ներքին ստեղծագործական գործոյթը՝ իր հրե շարժման մեջ, պետք է որ դուրս գար աշխարհի «ծանրությունից», իսկ կյանքը՝ «աշխարհը հաղթահարելուց»: Իր արտաքին իրացման մեջ, մշակույթի արտադրանքի մեջ ստեղծագործական գործոյթը գտնվում է «աշխարհի» իշխանության տակ եւ կաշկանդված է «աշխարհով»: Սակայն ստեղծագործությունը, որն անսահման ազատության հրե շարժումն է, պետք է ոչ միայն ծագի, այլեւ բխի եւ հաղորդի մարդկանց ու աշխարհին այն, ինչը դրսեւորվել է ստեղծագործական պայծառացումի, մտահղացման, կերպարի մեջ, ենթարկվում է արդյունքին, վարպետության, արվեստի իրացման օրենքին:

Ստեղծագործությունն իր բնույթով հանճարեղ է: Եվ մարդը՝ որպես արարող, ստեղծված է հանճարեղ արարածի կողմից: Մարդու հանճարեղությունն արտացոլում է իր մեջ Արարիչ-Աստծո պատկերը: Հանճարեղությունը հանճարի նույնականությունը չէ: Հանճարեղություն չի նշանակում, որ մարդն ունի հսկայական շնորհ՝ գրելու գեղարվեստական ստեղծագործություններ կամ փիլիսոփայական գրքեր, կառավարելու պետություններ կամ հայտնագործություններ ու գյուտեր անելու: Հանճարեղությունը պետք է վերագել ներքին ստեղծագործությանը, այլ ոչ թե ստեղծագործական արտադրանքի այսօրվա իրացմանը: Հանճարեղությունը Մարդկային անձնավորության անեղծական որակն է եւ ոչ թե հատուկ մի շնորհ, եւ դա վկայում է այն մասին, որ մարդը մղվում է դեպի սկզբնաղբյուրը, որ ստեղծագործական ընթացքը նրանում նախագծ է եւ ոչ թե պայմանավորված սոցիալական շերտադրվածքներով:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՆԳԸ

Սկիզբը՝ թիվ 18

Հանգի մուտքը հայ բանաստեղծություն խորհրդանշվում է գրապատմական մի շատ լուրջ եւ հիշարժան իրադարձությամբ: Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (մոտ 990-1058) 1046 թ. Կոստանդնուպոլսում բանավիճում է տաղաչափության, հռետորության եւ բանաստեղծական արվեստի մեջ վարժ, մուսուլմանական դպրությանը խիստ հմուտ արաբ գիտնական Մանուչեհի հետ: Արաբը, հակառակ Աստվածաշնչի, փառաբանում է

Ղուրանը՝ առավելությունը տեսնելով նրանում, որ մահմեդականների սուրբ գիրքը գրված է չափածո եւ հանգավոր, իսկ քրիստոնյաներինը՝ ոչ: Մագիստրոսը գրազ է գալիս Մանուչեհի հետ եւ ասում, որ ինչ նրա Մահմեդը գրեց 40 տարում, ինքը կանի 4 օրում: Եվ, իրոք, Մագիստրոսը չորս օրում Աստվածաշնչի կարեւոր դրվագները վերածում է չափածո եւ հանգավոր շարադրանքի, ինչն ընդգրկում է 1016 տող, եւ համաձայն գրազի՝ արաբը փոխում է իր դավանանքը՝ դառնում քրիստոնյա. հակառակ դեպքում Մագիստրոսը պետք է ընդուներ մահմեդականություն: Ստեղծվում է հանգավոր ու չափածո մի սեղմ Աստվածաշունչ՝ ըստ Մագիստրոսի: Այսպես առաջին հանգավոր տողերը հավատ են շարժում եւ մահմեդականին ստիպում դառնալ քրիստոնյա:

Սա շատ հիշարժան սկիզբ է: Արաբական Ղուրանի, ինչպես նաեւ պոեզիայի ազդեցությամբ հայ տաղերգության մեջ մուտք է գործում հանգավոր ոտանավորը: Այս կապակցությամբ արձանագրենք, որ ընդհանրապես հանգը՝ որպես ոտանավորի կշռույթային գործոն, արաբական ծագում ունի եւ արաբներից էլ 9-10-րդ դարերում թափանցել է եվրոպական բանաստեղծության մեջ:

Հայ պոեզիան՝ Գողթան երգերից մինչեւ «Սասնա ծռեր» եւ Մեսրոպ Մաշտոցից մինչեւ Գրիգոր Նարեկացի (951-1003), եղել է անհանգ: Նարեկացին նույնիսկ անդրադարձավ հանգին եւ այդ կապակցությամբ Մագիստրոսից առաջ «Մատյան...»-ի ԻՁ գլխի Ա մասում գրեց.

Եվ արդ, նրանց հետ, ովքեր ողբագին
եղանակների համաձայն
Խոսքեր են շարահարում, հորինում
հարմար,
Ամեն մի տողի վերջում միեւնույն գիրը
դնելով,
Որով արտասուք հոսեցնելու չափ
մորմոքեցուցիչ
Առավել սաստիկ ու սուր են ճմլում սրտի
ցավերը,-
Ուստի ես ինքս գլուխն անցած այժմ
այդպիսիների,
Ովքեր լալագին բանաստեղծություն են
եղանակում,
Նրանց ողբագին հեծեծանքներով
վշտակիր հոգիս եմ պարգում ահա:
<...> Այս է եղանակն ամենահարմար՝
թախիծությունը մեր նկարագրելու,
Հանգավորելով յուրաքանչյուր տող,
Որով եւ հոգու հույզերը տխուր ե՛ւս
առավել են հնչում սրտառուչ...

Ըստ երեւույթին՝ մինչեւ Նարեկացին ներառյալ շրջանում հանգը չի համարվել բարձր խոսքի հատկանիշ, անհրաժեշտ պահանջ, այն հասունացել-ձեւավորվել է ժողովրդական խոսքի ընդերքում եւ կիրարկվել՝ երգվել, արտասանվել համապատասխան ծիսական արարողությունների ժամանակ:

Նարեկացին հանգը համարում է ոչ թե դուրանածին, այլ ժողովրդական՝ բնորոշ լալյաց երգերին, որով խոսքը դառնում է ավելի հուզիչ եւ ներգործող:

Ահա «Մատյան...»-ի այդ գլուխը նա հյուսում է «ի» հանգով: Այս «ի»-ն թվային արժեքով քսանն է: Նարեկացու իսկ մեկնաբանությամբ դրա իմաստն այս է. «Այս ոտանավորի հանգերը ես նրա համար «ի»-ով կազմեցի, որ ցույց տամ, թե պարտական եմ քսան քանքարի, այսինքն՝ այն բազում շնորհներին, որոնք ընդունեցի Աստծուց» *(Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1985, էջ 1019-1020)*: Այս հատվածին դեռեւս միջնադարյան մեկնիչներն են անդրադարձել, ըստ որոնց՝ տողերը հանգավորելով՝ Նարեկացին «կրկին շուք տա բանին կարգաց», «յաղագս լալական եղանակի», «ոտնաչափն ուղղորդ գայ եւ ի գոյնն, զի լալիք է» *(նույն տեղը, էջ 1016)*:

Նարեկացու խոսքն այստեղ ոչ միայն հանգավոր է, այլեւ չափաբերված՝ տողերը տատանվում են 14-15 վանկի միջեւ: Ավելանում է նաեւ բաղաձայնույթը: Ինքը՝ Նարեկացին, «Մատյան...»-ի հաջորդ գլխում տեսաբանում է.

Քանզի ողբաձայն բանաստեղծության
հետ վերընծայեցի եւ չափական խոսք,
Յուսեցի կական ու կողկողագին հառաչ
- հեծություն,
Դառնաթախիծ լաց, արտասվագին երգ,
Այժմ վերստին պիտի սկսեմ
պաղատանքներն իմ
Խոստովանորեն եւ գղջողաբար
բարբառելով բաց
Ու մերկանալով [մերկացնելով] ծածուկն
ու գաղտնին:
Որպեսզի սկիզբն ամեն մի տողի,
ինչպես եւ վերջը միեւնույն բառի
կրկնությամբ
Այս թախանձալից եւ նմանաձայն
աղոթքը այստեղ ես պիտի դնեմ,
Որ խոնարհություն է հոգեկեցույց
(ԻԷ, ա):

Հաջորդում են բառերի կրկնությամբ ստեղծված ներդաշնակ հատվածներ 11 տող նույնական կառուցվածքներով.

Մեղա՛ ես մեծիդ բարերարությանը,
անարգս մեղա՛,
Մեղա ծագումիդ ճառագայթներին,
խավարս մեղա՛...

Ժողովրդական նախասկիզբը Նարեկացին շեշտում է նաեւ այս տողերում.

<...> եղերապատում
բանահյուսությամբ
Լալկան կիների ջայլերը բոլոր
<...> կարող են ցավերս
Ու աղերսներս երգի վերածել եւ
կամ նվագել
Զայնով ողբական (ԿԸ, ա):

Բաղաձայնույթի եւ առձայնույթի հագեցված տողերով Նարեկացին այսպես հասնում է բազմաձայն, բայց շատ ներդաշնակ համանվագի: Այս պոեմում Նարեկացին շատ մեծ երաժիշտ է՝ բառերը հոգու հնչյունների վերածած երգարար: Այսպիսով՝ Նարեկացին հնչյունական ձայնակարգության մեծ վարպետ է, իսկ որտեղ բառի հնչյունը, այնտեղ էլ՝ բառի ազնիվ թրթիռը: Ընդ որում՝ խոսքը ոչ միայն «Մատյան...»-ի մասին է, այլեւ տաղերի, որոնցից յուրաքանչյուրը մի-մի տոնական ցնծերգ է:

Նարեկացու եւ Մագիստրոսի դիպվածական հանգաբանությունից հետո հանգը հիմնավոր տեղ գրավեց հայ պոեզիայի մեջ: Շնորհալու տաղերում եւ պոեմներում տարածված է ոչ միայն պարզ հանգը, այլեւ առձայնույթն ու բաղաձայնույթը, հարակրկնությունը, վերջույթը: Շնորհալին, ըստ էության, կշռույթավոր՝ չափաբերված, հանգավորված ու տնատված ոտանավորի առաջին ներկայացուցիչն է: Իշխում են քառավանկ ու հնգավանկ անդամներով գրված 8, 10 վանկանի տողերը: Նրա տաղերը բնույթով կա՛մ ներդաշնակ երգեր են, կա՛մ ասերգեր: Չմոռանանք, որ Շնորհալին նաեւ երաժիշտ էր եւ հայտնի նաեւ Երգեցող անունով: Նա ջանք չի խնայել ստեղծելու բառի եւ հնչյունի խոսքաձայնային ներդաշնակություն: Շնորհալին ոչ միայն ձգտում է ներդաշնակ չափական կշռույթի, ինչի կայուն բաղադրիչն է նաեւ հանգը, այլեւ պահանջում է իրեն ճիշտ հասկանալ.

Արդ առընկա՛լ բանս դուզնաքեայ,
Եվ վերծանեա ըստ իմաստնոց,
Ոչ առաւել եւ ոչ նուազ,
Այլ ի յոտին բերեալ չափոց:

Այլ են Շնորհալու ազատաչափով եւ անհանգ գործերը, որ հանդիպում են տաղերի եւ քարոզների մեջ: Սա թողնենք:

Չափ, տուն, հանգ. սրանք են այն գործոնները, որոնցով գեղարվեստական ազատ խոսքը չափաբերվում է, կայունանում եւ ստեղծում երգեցիկ-մեղեդային բանաստեղծության տեսակը:

Շնորհալու «Վիպասանություն» պոեմը՝ գրված 8 (4+4) վանկանի տողերով, հանգավոր է՝ նախերգը «ի» հանգով (30 տող), բուն պոեմը՝ «եալ» (1594 տող): «Յաղագս երկնի եւ զարդուց նորա» պոեմը բաղկացած է 131 երկտողից (262 տող) եւ գրված է հանգերով: «Ողբ Եդեսիոյ»-ն (1046 տող) գրված է 14 տարատեսակ հնչեղության հանգերով: Շնորհալին ձգտել է հանգային բազմազանության, որպեսզի խուսափի հնչյունական միապաղաղությունից: Այդ կապակցությամբ գրել է.

Ո՛չ մի տառիւ վերջ յանգական,
Չի մի՛ ծալից լուր ծանրանան.
Այլ խտրաբար փոփոխական,
Չի ընթերցողք ոչ ձանձրանան:

«Հիսուս Որդի» պոեմն ընդգրկում է չափով (8=4+4) գրված «Երկու հազար տուն հանգական»: Շնորհալին նշանակություն է տալիս խոսքի ձեւին՝ տաղաչափությանը, եւ այդ կապակցությամբ գրում.

Ոմանք խոսում են ըստ չափի,
Բայց գորավոր եւ ըստ կարգի,
Մեկն ստանում է շնորհք տաղի,
Չի այդպես է միտքը գործում,
Չի բնությունն է մեր հայտնի՝
Շուտ հագեցող, ձանձրույթով լի,
Ուստի տալիս է նա լեզվին
Բազմատեսակ ձեւեր բանի:
Այդպես էլ ես ձեւ տվեցի
Ոտանավոր խոսք այս թղթին,
Ի գվարճություն բան սիրողի,
Որ թողությունն ինձ ընծայի
Առատաբաշխ Տերը ծրի:

Այդուհետեւ հանգը, չափը, տունը դարձան իշխող եւ օրինաչափ, որին անմիջապես Շնորհալուց հետո հետեւեցին Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին, Մխիթար Այրիվանեցին, Ֆրիկը:

Ֆրիկի տաղերում արդեն կայունանում է կիսատողը, նրա նախընտրածը 16 = 8(4+4) + 8(4+4) չափն է: Քիչ չեն նաեւ 8=4+4 չափով գրված գործերը: Հանգերը ձեւավորվում են վերջավորություն-վերջածանցներով, այդ իսկ պատճառով հարուստ չեն: Մեծ մասամբ բայական-գոյականական վերջավորություններ են:

Չափը, տունը եւ հանգը աստիճանաբար կայունանում եւ բազմազանության են հասնում Հովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու տաղերում, Կոստանդինն արդեն օգտագործում է հանգավորման մուխամազի տարատեսակը՝ աաաա, բբբա, գգգա եւ այսպես շարունակ: Հանդիպում են հաջորդական (աա-աա-աա...) եւ կից (աա, բբ, գգ...) հանգավորման ձեւեր: Հանգն ամրապնդվում եւ դիրքային ու հնչյունական նվազ բազմազանության է հասնում Խաչատուր Կեչարեցու, Հովհաննես Թլկուրանցու, Առաքել Սյունեցու, Առաքել Բաղիշեցու, Մկրտիչ Նաղաշի, Գրիգորիս Աղթամարցու, Ներսես Մոկացու ստեղծագործության մեջ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

[redacted]

Սկիզբը՝ էջ 4

Ինչպես Անտիգոնը մեղադրեց Ալեքսանդրին, թե նա զվարճանալու համար կիթառի նվագ է ունկնդրել

Ալեքսանդրի զորավար Անտիգոնը մի անգամ տեսավ, որ Ալեքսանդրը զվարճանալու համար լսում էր կիթառի նվագ, խլեց, կոտրեց գործիքն ու նետեց ցեխի մեջ: Եվ Ալեքսանդրին ասաց. «Քո հասակին ու տարիքին վայել է թագավորություն կառավարել, ոչ թե կիթառի նվագ ունկնդրել»:

Կարելի է նաեւ այսպես ասել. Մարմինը թագավորության նման է՝ նրա համար կործանարար է հեշտասիրությունը, ինչպես կիթառը թագավորության համար: Թող ամաչի նա, ով փոխանակ առաքինության՝ տրվում է հեշտասիրության:

Պորը (Ալեքսանդրի պատմության հնդիկ թագավորը), որ մարտնչում էր Ալեքսանդրի դեմ, մի խրախճանքի ժամանակ հրամայեց կտրել երաժշտի կիթառի լարերը եւ ասաց. «Ավելի լավ է լարերը խզել, քան շեղվել ճանապարհից, քանի որ հնչյունի քաղցրությունը կործանում է արիությունը»:

Ինչպես մի թագավոր իր որդուն տասը տարի պահեց առանց լույսի, եւ ինչպես նրան ամենից շատ դուր եկան կանայք

Մի թագավորի որդի ծնվեց: Աստղագետները կանխասացին, որ եթե մինչեւ տասը տարեկանը պահված չլինի արեւից, տեսողությունը կկորցնի: Այդ պատճառով թագավորը հրամայեց նրան պահել մութ անձավում եւ դաստիարակել այնտեղ:

Երբ անցավ նշված ժամկետը, նա հրամայեց դուրս բերել տղային անձավից եւ ամենից առաջ նրան ցույց տվեց շատ թանկարժեք իրեր եւ բազում գեղեցիկ աղջիկներ: Տալով ամեն իրի անունը՝ նա աղջիկներին դեւ անվանեց: Հետո նա որդուն հարցրեց՝ այդ ամենից նրան ինչը դուր եկավ: Որդին պատասխանեց. «Դեւերը»: Թագավորը խիստ զարմացավ եւ ասաց. «Այ թե ինչպիսին է կանացի գեղեցկության իշխանությունը»:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Արշակ ՄԱՂՈՅԱՆԻ

695 թվականի Կոստանդնուպոլսի գրադարանի մի եզակի վավերագիր

Սկիզբը՝ էջ 4

Ըստ այսմ՝ Քրիստոսի գալստյան 704 թվականը հունարենում կոչվել է «կենցաղումս անցաւոր Քրիստոսի գալստեան տարի»: Հավաստագիրը կամ վկայականը հայերեն թարգմանելու ժամանակ, խույս տալով քաղկեդոնական որոգայթից, Փիլոնը «յեւթն հարիւրերորդի չորրորդի կենցաղումս անցաւոր Քրիստոսի գալստեանն» արտահայտությունից «կենցաղումս անցաւոր» բառերը բարձրացրել է վերեւ՝ «Յամի վեց հազար երրորդի երկերիւր երրորդի չոր[ր]որդի կենցաղումս անցաւորի ժամանակագրութիւն»: Այս վկայականից որոշ ուսումնասիրողներ հանիրավի եզրակացրել են, թե թարգմանիչը Կ. Պոլսում եղած ժամանակ քաղկեդոնականություն է ընդունել...

Փաստորեն՝ Սուրբ Սոֆիայի եկեղեցու եւ Թեոփանեսի ժամանակագրությունները միանման ընդունում են աշխարհի արարչագործության միայն Ալեքսանդրյան տոմարը, որ տեւել է 5500 տարի, քանի որ, ըստ Թեոփանեսի, աշխարհի արարչագործության

6188-րդ տարին Քրիստոսի մարդեղության 688 թվականն է՝ 6188-688=5500, նույն կերպ էլ հայերեն վկայականում առկա Սուրբ Սոֆիայի ժամանակագրության 6204-րդ տարին Քրիստոսի գալստյան (ոչ թե հայտնության) 704 թվականն է՝ 6204-704=5500: Ուրեմն երկուսի հիմքն էլ Ալեքսանդրյան տոմարն է, ոչ թե ինչ-որ այլ՝ «Կոստանդնուպոլսի տոմար»:

Հետաքրքիր զուգադիպությամբ թե՛ Կ. Պոլսի գրադարանի հայերեն վկայականը եւ թե՛ հույն Թեոփանես Խոստովանողը, իբրեւ VII դարավերջի ուշագրավ իրադարձություն, նշում են Բյուզանդիայի Լեւոն կամ Լեոնտիոս կայսեր գահակալության առաջին տարին, որ ըստ վկայականի՝ տեղի է ունեցել «յիններորդում Ընդիքտիոնի», այն է՝ հռոմեական Տիրոջ տարվա (Anno Domini) 695 թվականին, իսկ ըստ Թեոփանեսի՝ հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր առաջին տարին Քրիստոսի մարդեղության 688 թվականն է *(Թեոփանես Խոստովանող, Ժամանակագրություն, էջ 81)*: Հետեւապես Քրիստոսից հետո բյուզանդական 688 թվականը զուգադիպում եւ նույնանում է հռոմեական 695 թվականին:

Գալով Քրիստոսի մարդեղության (իմա՝ հայտնության) 688 թվականի եւ Քրիստոսի գալստյան 704 թվականի տարբերությանը, որ կազմում է 16 տարի (նույն տարբերությունն է առկա նաեւ աշխարհի արարչագործության 6204 եւ 6188 թվերի միջեւ), ապա այդ հավելյալ16 տարին, որի բացակայությունը Թեոփանեսի մոտ հաստատվում է նրա «Խոստովանող» մակդիրով, ըստ իս, Հիսուսի մանկության տասներկու եւ վերջին չորս (մկրտությունից մինչեւ խաչելություն) տարիների գումարն է, որ Քրիստոսն ապրել է երկրի վրա՝ իբրեւ մահկանացու մարդ, կենցաղում անցավոր՝ ըստ քաղկեդոնական դավանանքի, որ մերժում են Քրիստոսի հայտնությունը դավանող բոլոր քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը:

Իսկ ինչպես բացատրել, որ բյուզանդական ժամանակագրությունը չի զուգընթանում հռոմեականի հետ... Ըստ Թեոփանեսի, օրինակ, Քրիստոսի մարդեղության 688 թվականը յոթ տարով ետ է ընկնում հռոմեական Տիրոջ տարվա 695 թվականից: Դրա բացատրությունը մեկն է. քանի որ աշխարհի արարչագործության Ալեքսանդրյան (Անսիանի) տոմարը բյուզանդական Եկեղեցին է փոխ առել հռոմեականից, ապա տիեզերական մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անկախությունը Հռոմի նկատմամբ ցուցադրելու համար աշխարհի արարչագործության սկիզբը դրել է յոթ տարով ավելի ուշ, քան Հռոմի Ալեքսանդրյան տոմարը, այսինքն՝ Հռոմեական կամ Ալեքսանդրյան տոմարի ավարտը՝ 5500 թվականը, զուգադիպում է բյուզանդական ժամանակագրության 5493 թվակա-

նին... Այդ թվականն արդարանում է նաեւ Թեոփանես Խոստովանողի օգտագործած տոմարով, եւ գրեթե նրան ժամանակակից՝ մեր ունեցած հայերեն վկայականի տվյալներով 6188-695=5493: Ըստ այսմ՝ հռոմեական կամ բուն Ալեքսանդրյան տոմարի 5501 թվականը (որ է՝ բյուզանդական տոմարի 5494 թ.) Քրիստոսի հայտնության առաջին տարին է կամ մեր թվարկության առաջին տարին: Իսկ բյուզանդական քաղկեդոնական տոմարում Քրիստոսի գալստյան առաջին տարին զուգադիպում է Ալեքսանդրյան տոմարի 5508 թվականին: Այս է, որ բյուզանդագետներն անվանում են «Կոստանդնուպոլսի տոմար», որը ճիշտ չէ, քանի որ 5508 թվականը հռոմեական տոմարի կամ մեր թվարկության ութերորդ տարին է: Այնպես որ Կոստանդնուպոլսի որեւէ տոմար (5508 թ.) գոյություն չի ունեցել, թեեւ այդ մասին շատ մեկնություններ են արվել:

Ասվածից հետեւում է, որ այսպես կոչված՝ հռոմայեցիների ժամանակագրությունից օգտվելիս անհրաժեշտ է Թեոփանես Խոստովանողի նշած թվականին ավելացնել յոթ տարի՝ մեր թվարկության ճիշտ տարեթիվը որոշելու համար:

Զարմանք է հարուցում, թե ինչպես է բյուզանդական գրադարանային գործի այս եզակի վավերագիրը՝ իր անըմբռնելի տարեթվերով, հայ մատենագրության մեջ 13 դար շարունակ արտագրվելով, մնացել անաղարտ՝ ենթարկվելով ամեն տեսակի որակումների, որի համար նույնիսկ Փիլոն Տիրակացին, կաթողիկոս Սահակ Ձորափորեցին եւ ուրիշներ հանիրավի մեղադրվել են քաղկեդոնականության մեջ:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 5

Սրան կարող է չհամադրվել իրացման, արվեստի, վարպետության ունակությունը: Հանճարեղ բնության եւ նախագո ստեղծագործական պրոցեսի միավորումը, որը մղվում է դեպի սկզբնաղբյուրը, շատ մեծ շնորհով, տաղանդով ստեղծագործությունը որպես արտադրանք իրացնելը հենց կազմավորում է հանճարը: Սակայն տաղանդավոր կարող է լինել տղամարդու սերը կնոջ նկատմամբ, մոր սերը՝ երեխայի, տաղանդավոր կարող է լինել մերձավորների մասին հոգալը, հանճարեղ կարող է լինել մարդու ներքին ենթագիտակցությունը, որը ոչ մի արտադրանքով չի արտահայտվում, հանճարեղ կարող է լինել կյանքի իմաստի եւ կյանքի ճշմարտության որոնումների մասին տառապանքը: Սրբին հավանաբար բնորոշ է ինքնաստեղծումի, իրեն կատարյալ, շողափայլ արարածի վերափոխելու հանճարեղությունը՝ չնայած ոչ մի արտադրանք նրան չհաջողվի ստեղծել: Խաբուսիկ է մարդկանց միջեւ ուզածդ համեմատությունը՝ ըստ նրանց հանճարեղության եւ օժտվածության, քանզի դա մերժումն է անհատականության: Ստեղծագործության հետ կապված գոյություն ունի մեծագույն թախիծ ու վիշտ: Ստեղծագործությունը հենց մեծագույն անհաջողությունն է՝ նույնիսկ իր ամենակատարյալ արտադրանքով, որը մշտապես չի համապատասխանում ստեղծագործական մտահղացմանը: Գոյություն ունի ողբերգական բախում ստեղծագործության եւ անձնական կատարելության միջեւ: Ստեղծագործության ուժը, մեծությունը, հանճարեղությունը ամենեւին համաչափ չեն մարդու ձեռք բերած կատարելության աստիճանի հետ: Ստեղծագործողը՝ մեծագույն արարիչը կարող է լինել աննպատակ զվարճասեր, կարող է լինել աշխարհի փուչ գործերի ամենախղճուկը: Այս խնդիրը հանճարեղ սրությամբ դրել էր Պուշկինը, ով ստեղծագործության մասին ամենաաքանչելի խոսողը եղավ: Ստեղծագործական հանճարը հենց այնպես է տրվում մարդուն, այն կապված չէ մարդու կատարելությանը հասնելու, իրեն վերափոխելու կրոնական կամ բարոյական ջանքերի հետ: Ստեղծարարությունն ասես դուրս է օրենքի բարոյագիտությունից եւ փրկչական բարոյագիտությունից: Այն ենթադրում է այլ բարոյագիտություն: Արարողը արդարանում է իր ստեղծագործությամբ, իր ստեղծագործական հերոսությամբ: Եվ այստեղ մենք հանդիպում ենք սքանչելի բարոյական պարադոքսի հետ: Ստեղծագործողն ու ստեղծագործությունը հետաքրքրված չեն փրկությամբ եւ կորստյամբ: Ստեղծագործողն իր գործերով մոռանում է իր անձնավորության մասին, իր մասին, հեռանում է իրենից: Ստեղծագործությունը կրում է անձի բնության լարվածությունը, եւ դրանով հանդերձ, այն անձի մոռացությունն է: Ստեղծագործությունը միշտ զոհ է ենթադրում: Ստեղծագործությունը միշտ ինքնահաղթահարում է, սեփական ներամփոփ կյանքի սահմաններից դուրս գալը: Ստեղծագործողը մոռանում է փրկության մասին, նա մտածում է գերմարդկային արժեքների մասին: Ստեղծարարությունն ամենաքիչը եսասիրություն է: Եսակենտրոն տրամադրվածությամբ ոչինչ չի կարելի ստեղծել, հնարավոր չէ տրվել ոգեշնչման եւ քո ներսում երեւակայել ավելի լավ աշխարհ: Պարադոքսն այն է, որ ճգնավորական փորձը մարդուն տանում է ինքն իր ներսում ամփոփվելուն, կենտրոնացումի՝ սեփական կատարելության վրա, եւ ուղղորդում վերին աշխարհ: Ստեղծագործությունն ունի սեփական ճգնություն եւ սեփական ինքնասահմանափակում, սակայն այլ տեսակի: Այն քրիստոնեական ուղղությունը, որն առաջարկում է սկզբում զբաղվել ճգնությամբ, հասնել կատարելության, նոր հետո ստեղծագործել, ոչ մի պատկերացում չունի ստեղծարարության մասին: Ստեղծարարության մեջ գոյություն ունի ճգնություն, սակայն այլ որակի, քան այն ճգնությունը, որն ուղղված է անձնական կատարելությանը եւ անձնական փրկությանը: Ոչ մի ճգնությամբ չի կարելի հասնել ոչ միայն հանճարի ու տաղանդի, այլ նույնիսկ փոքրիկ շնորհի եւ ընդունակությունների: Քանզի ստեղծագործական հանճարեղությունը ձեռք չի բերվում վաստակով, այն ձրի տրվում է ի վերուստ՝ որպես շնորհ: Ստեղծագործողից պահանջվում է իր սկզբնական ազատության ստեղծագործական լարվածություն, այլ ոչ թե ինքնակատարելագործումի ճգնավորական հերոսություն: Եթե Պուշկինը զբաղվեր ճգնությամբ եւ ինքնափրկությամբ, ապա նա, հավանաբար, կդադարեր մեծ բանաստեղծ լինելուց: Ստեղծարարությունն առնչվում է անկատարությանը: Եվ կատարելությունը կարող է անհաճո լինել ստեղծարարության համար: Այստեղ է ստեղծարարության խնդրի բարոյական ողջ պարադոքսալությունը:

Երբ մարդը բռնում է ինքնակատարելագործումի ուղին, կարեւոր չէ՝ կաթոլիկական, ուղղափառության, տոլստոյական, յոգայական, թեոսոֆիստական եւ այլ, ապա նա կարող է կորած լինել ստեղծարարության համար: Ստեղծարարությունը ենթադրում է անձնական կատարելության մոռացում եւ անձի զոհաբերում: Ստեղծարարության ուղին հերոսության ուղի է, բայց այլ մի ուղի, քան անձնական կատարելության եւ փրկության ուղին է: Ստեղծարարությունն անհրաժեշտ է Աստծո արքայությանը, աշխարհում Աստծո գործերի համար, բայց ամենեւին հարկավոր չէ անձնական փրկության համար: Կամ եթե անհրաժեշտ է, ապա միայն նրա համար, որ ստեղծագործողը արդարանա ստեղծագործությամբ: Հնարավոր չէ միայն մեղքի զգացումից ստեղծագործել եւ կամ՝ միայն հնազանդությամբ: Ստեղծագործել նշանակում է հոգու անցում կյանքի մեկ այլ ծրագրի: Իսկ հոգին կարող է միաժամանակ ապրել կյանքի տարբեր պլաններում, կարող է լինել բարձունքում եւ ցածուտում, կարող է հանդուգն ստեղծագործել եւ խոնարհաբար ապաշխարել: Սակայն բոլոր ոլորտներում էլ ստեղծարարությունը միանգամայն բարոյական է, քանզի կա բարոյական ստեղծագործություն, որը խոսում է մարդու այն սկզբի մասին, որի վրա հնարավոր է կառուցված լինի մեկ այլ բարոյագիտություն, քան օրենքի եւ փրկաբանական բարոյագիտություններն են: Ստեղծարարությունը հենց այն է, ինչն ամենից շատ է հիշեցնում մարդու կոչումի մասին՝ մինչ մեղսագործությունը, որոշ իմաստով՝ «բարուց ու չարից անդին» ունեցած կոչումի: Սակայն քանի որ մարդու բնությունը մեղսական է, ստեղծագործությունն աղճատվում եւ խեղաթյուրվում է մեղքից, ուստի հնարավոր է նաեւ չար ստեղծագործություն: Միայն ստեղծագործությունն է խոսում մարդու կոչումի ու նշանակության մասին աշխարհում: Օրենքը ոչինչ չի ասում կոչման մասին, փրկաբանական բարոյագիտությունն ինքնին նույնպես չի խոսում: Իսկ եթե Ավետարանները եւ Պողոս առաքյալը խոսում են մարդկանց շնորհների եւ մարդկանց կոչումների մասին, ապա միայն նրա համար, որ ելնում են փրկագործության խորհրդի սահմաններից: Իսկական, կենսական ստեղծագործությունը մշտապես Հոգով է, Սուրբ Հոգով, քանզի միայն Հոգում է կատարվում շնորհի եւ ազատության այն միավորումը, որը տեսնում ենք ստեղծագործության մեջ:

Շարունակելի

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

Հայոց ցեղասպանություն

Վերք կրակ

Նոր Վեհարանը՝ հիվանդանոց

1915-1916 թթ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանն այդպես էլ չբացեց իր դռները ճեմարանականների առջեւ: Ինչպես տեղեկացնում է 1915 թվի «Արարատի» հուլիս-օգոստոս համարը, ամռանից ճեմարանի ննջարաններն ամբողջապես վեր էին ածվել փախստական գաղթականների հիվանդանոցի, իսկ ճեմարանի շենքը ժամանակավորապես դարձել էր որբ ու հյուծված մանուկների ապաստարան:

Դեռեւս 1914 թ. դեկտեմբերյան իր հայտնի կոնդակում Ամենայն Հայոց Գեւորգ Ե Կաթողիկոսը, ի թիվս այլ հանձնարարականների, հրահանգում էր՝ գաղթականներին տալ «զբժշկական օգնութիւնս, սփոփել եւ մխիթարել զնոսա հոգեպէս»:

Արդեն 1915 թ. հունվարի 24-ին գումարված Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի անդրանիկ նիստը որոշում է Մայր Աթոռ հրավիրել բժիշկների եւ ֆելդշերների՝ այս մասին հայտարարություններ տարածելով հայկական լրագրերում: Արդյունքների մասին տեղեկանում ենք «Արարատի» 1915 թ. ապրիլ-մայիս համարում հրապարակված գաղթական առաջին խմբերի մասին պատմող հոդվածից. *«Յանձնաժողովը գաղթականներին բժշկական օգնութիւն էր ցոյց տալիս Երեւանից հրաւիրուած ամերիկական կրթութեամբ բժիշկ Օգսէնտ Տէր Յարութիւնեանի եւ տաճկական զօրքից գերուած հայ բժիշկներ պ. Յովսէփեանի եւ Բլբուլեանի միջոցով: Իսկ Փետրուարի 13-ին 25 մահճակալով գաղթականների համար յատուկ հիւանդանոց բացուեց՝ ղեկավարութեամբ բժիշկ Օգսէնտ Տէր Յարութիւնեանի, իսկ Բագուի Կուլտուրական Ընկերութեան ծախսով երկրորդ հիւանդանոց եւս բացւում է բժիշկ Թաշճեանի ղեկավարութեամբ»*:

Գաղթականների մեջ շարունակաբար ահագնացող տարափոխիկ հիվանդությունների վերացման համար, սակայն, այս ամենը չէր կարող բավարար սպեղանի լինել:

Գեւորգ Ե Հայրապետը 1915 թ. հուլիսի 10-ին, ի լրումն իր նախորդ կոնդակի, հրապարակում է եւս մի նոր կոնդակ՝ եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովին պատվիրելով բացել նոր հիվանդանոցներ եւ սննդատու կայաններ:

Ծատ չանցած նոր հիվանդանոցներ են բացվում նաեւ Մայր Աթոռի մանկավարժական թանգարանում, սբ Գայանե վանքի նորակառույց շենքում: Որոշվում է հիվանդանոց բացել նաեւ Ա. Մանթաշյանի բարերարությամբ դեռ նոր շահագործման հանձնված Վեհարանում, փառահեղ մի շինություն, որը հանգամանքների բերումով, իբրեւ Վեհարան, ծառայելու էր միայն շուրջ քառասուն տարի անց:

Մի քանի ամիս շարունակվող նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1915 թվականի դեկտեմբերի 8-ին, դեռեւս իր նպատակին չծառայած այս շինությունը եւս բացվում է իբրեւ հիվանդանոց: Այստեղ են տեղափոխվում Մայր Աթոռի ճեմարանում, ննջարաններում եւ մանկավարժական թանգարանում տեղավորված հիվանդանոցները:

Վեհարանի վերին հարկն ամբողջապես հատկացվում է զինվորական հիվանդանոցին, որտեղ աշխատում են զինվորական բժիշկներ՝ բժշկապետ Գուրբսկու ղեկավարությամբ: Առաջին հարկում տեղավորվում է Քաղաքների միության հիվանդանոցը՝ բժիշկ Էյխլերի հսկողությամբ:

Այս մասին «Արարատի» 1915 թ. տարեվերջի համարում կարդում ենք. *«Թէ առաջին եւ թէ երկրորդ յարկերը յատկացրած են գաղթականների խնամատարութեան: Հիւանդանոցի պահպանութեան ծախքերը կատարում է Քաղաքների Միութեան տեղական վարչութիւնը, Էջմիածնի Եղբայրական Օգն. Յանձնաժողովը հոգում է միայն բժշկական մասին 16 գթութեան քոյրերի ռոճիկները:*

Հիվանդանոցը յարմարեցրած է 500 մահճակալի, առաջին օրը հիւանդանոց մտան 131 հոգի, իսկ հետեւյալ օրը՝ 52 հոգի:

Հիւանդանոցն ունի իր դեղատունը, խոհանոցը, ներքին ընդհանուր ջերմութեան կենդրոնական վառարաններ եւ այլն, միով բանիւ՝ այն բոլոր յարմարութիւնները, որ կարելի է ունենալ այդքան կարճ ժամանակամիջոցում կազմակերպուած եւ ճանապարհի հաղորդակցութեան դիւրութիւնից զրկուած հեռաւոր մի վայրում»:

Մայր Աթոռում բացված հիվանդանոցները նոր Վեհարանի շենք տեղափոխելով հանդերձ՝ ճեմարանի շենքը դեռեւս շարունակում է գործել իբրեւ մանկական հիվանդանոց՝ 150 մահճակալով: Բացի այդ՝ իբրեւ հիկանդանոց է շարունակում ծառայել նաեւ սբ Գայանե վանքի նորակառույց շենքը՝ 45 մահճակալով, ուր զետեղվում են բծավոր տիֆով վարակված հիվանդները:

Ձեռնարկված բոլոր այս քայլերը կրկին բավարար չէին: Դեկտեմբերի սկզբներից նոր թափ ստացած բծավոր տիֆն ստիպում է հիվանդանոցներ բացել նաեւ Էջմիածին գյուղում: 1915 թ. դեկտեմբերի 16-ին այստեղ բացվում է երկու մանկական հիվանդանոց՝ 30-ական մահճակալներով՝ բծավոր տիֆով վարակվածների եւ մանկական ընդհանուր սուր վարակիչ հիվանդ երեխաների համար: Որոշվում է 1916 թվի հունվարի կեսերից 40 մահճակալով հիվանդանոց բացել նաեւ մեծահասակների համար:

«Այսպիսով Էջմիածնում եղած բոլոր հիւանդանոցների վարչութիւնը կարող է բաւարարել 700 հիւանդի:

Բացի հիւանդանոցներից կայ եւ առանձին բժշկական կայան (ամբուլատորիա), երթեւեկ հիւանդների համար, ուր գաղթականներն ստանում են բժշկական օգնութիւն, դեղեր եւ այցելութիւն իրենց բնակած տների մէջ»,- հայտնում է «Արարատը»:

Անհրաժեշտ էր զգուշավոր լինել նաեւ ճեմարանականների առողջության համար: Այս է պատճառը, որ ճեմարանի պարապմունքները, որ հետաձգվել էին մինչեւ 1915 թ. նոյեմբեր, բժշկական հատուկ հանձնաժողովի խորհրդով չեն սկսվում նաեւ երկրորդ կիսամյակում:

Այսուհանդերձ՝ գաղթականների շրջանում տարածված տարափոխիկ հիվանդությունները չեն շրջանցում նաեւ Մայր Աթոռի միաբանությանն ու աշխատակիցներին: Բծավոր տիֆից մահանում է «Արարատի» խմբագիր, Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի անդամ, Մայր Աթոռի որբանոցների տեսուչ Բաբկեն վարդապետը: Գրաշարների հիվանդության եւ նաեւ թղթի պակասության պատճառով միացյալ համարներով է սկսում լույս տեսնել «Արարատը»: Եվ արդյո՞ք մոլեգնող հիվանդությունն սպառնում էր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ուշագրավ է 1916 թ. ամանորյա «Արարատի» հաղորդումը. *«Անցեալ տարուայ դեկտ. վերջին Ազգիս Վեհափառ Հայրապետի յանկարծակի հիւանդութեան անսպասելի ծանր կերպարանք ստանալը բարեբաղդաբար ո՛չ մի հետեւանք չունեցաւ Վեհափառ Հիւանդի առողջական վիճակի վերայ: Թէեւ ապաքինումը քիչ աւելի երկար տեւեց, քան ենթադրում էին բժիշկները, սակայն հետեւանքը կատարելապես գոհացուցիչ էր եւ ուրախառիթ իւր ցրուած հօտի ամեն դասակարգի եւ խաւերի համար, որոնք ամենայն հոգածութեամբ անդադար հեռագրական տեղեկութիւններ էին խնդրում Հայրապետական Դիւանից Ն. Ս. Օծութեան առողջական վիճակի մասին»*:

1916 թ. «Արարատի» մի քանի համարներում հրապարակված են նաեւ վիճակագրական մանրամասն տվյալներ Մայր Աթոռի հիվանդանոցների, ընդունված եւ դուրս գրված հիվանդների թվաքանակի եւ մահացության մասին: Ըստ այդ տվյալների՝ Մայր Աթոռի հիվանդանոցներում բուժում ստացած հիվանդների թիվը հասնում էր հազարների:

Ծնորհիվ ձեռնարկված միջոցների՝ հիվանդների թիվն աստիճանաբար պակասում է: 1916 թ. մայիս-հունիս համարում «Արարատն» արդեն տեղեկացնում է. *«Նոր վեհարանի մէջ գոյութիւն ունեցող հիւանդանոցի առաջին յարկի բաժինը բոլորովին վերացած է եւ մնում է միմիայն երկրորդ յարկաբաժինը՝ զինուորական հիւանդանոցի վարիչ բժշկպտ. Ս. Ի. Գուրբսկու ղեկավարութեամբ»*:

Այսուհանդերձ՝ չնայած նման սփոփիչ լուրերի՝ 1916 թ. հունիսի 7-ին Գայանյանց տոնը կատարվում է Մայր տաճարում, քանի որ, ինչպես նշում է «Արարատը», *«վանքն իբրեւ վարակիչ հիւանդութիւնների ապաստանարան-հիւանդանոց, անվտանգ չէր ժողովրդի ուխտագնացութեան համար»*:

Այստեղ՝ Սբ Գայանեի հարեւանությամբ, Ներսիսյան անտառում էին թաղվում նաեւ նահատակ գաղթականները:

Հանրային այդ գերեզմանատանը Մայր Աթոռի միաբանությունը բազմաթիվ ուխտավորների եւ գաղթականների ներկայությամբ 1917 թ. հունիսի 22-ին կատարում է հոգեհանգստյան կարգ: *«Եղբայրական Օգնութիւնը» մտադիր է այդ վայրում մի յուշարձան կանգնեցնել, «Եղբայրական գերեզմանի» վերայ, ուր ամփոփուած են հայի տառապանքը եւ յուշարձան կլինի նաեւ Մ. Աթոռի սփոփանքի ու գթութեան գործի»*,- հայտնում է 1917 թ «Արարատը»:

Եղբայրական օգնության մտադրությունն այդպես էլ մնաց անկատար: Այսօր Սբ Գայանեի հարեւանությամբ մանկական խաղահրապարակ է: Ընկալենք այն իբրեւ հայության վերածննդի յուրօրինակ հուշարձան:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՒՐԱՅ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 5

Արձակագիրն ու թատերագիրն ունեն իրենց կերտած կերպարներում սիրո ռոմանտիկան, մարդկային բարդ ապրումները, զգացմունքն ու բերկրանքը, ձգտումն ու տենչանքը, խանդն ու դավաճանությունը, մերժման դառնությունը կամ հիասթափությունը առարկայորեն մարմնավորելու եւ դիպաշար-սյուժեում ներկայացնելու առավել լայն հնարավորություններ: Անձնական նամակներում, անգամ արձակ բանաստեղծություններում բոլորն են իրենց թույլ տալիս լինել ազատ ու անկաշկանդ, եւ չկան զգացմունքների արտահայտման արգելք ու սահմանափակում: Իսկ մարդկային նույն այդ ապրումներն ու զգացմունքները, խոհերն ու տրամադրությունները ինչպե՞ս են դրսեւորվում պատկերավոր մեծ կամ փոքր գեղարվեստական չափածո խոսքում: Սա արդեն եապես տարբեր խնդիր է՝ կապված **քնարական հերոս** հասկացության հետ, որովհետեւ քնարերգության մեջ անձնական պարզ հարաբերությունների զգացմունքային դրսեւորումները պատկերավորման արտահայտչամիջոցներով վերածվում են ընդհանրացված գեղարվեստական պատկեր-կերպարի, որը կամ նույնական է հեղինակի հետ, այսինքն՝ հեղինակի ես-ն է, կամ երկրորդ դեմքով հանդես եկող խոսակիցն է, ում դիմում է հեղինակը, այսինքն՝ դու-ն, կամ հեղինակից ու խոսակցից դուրս գտնվող մի երրորդ անձնավորություն՝ կերպարի աստիճանի բարձրացած: Քնարական հերոսների տարբերությունները գերազանցապես պայմանավորված են հեղինակների անհատականությամբ ու նրանց գեղագիտական նպատակադրումներով:

Քնարական կամ էպիկական ստեղծագործության մեջ գեղեցկուհի անձնավորությունը եւ նրա հիմքով ստեղծված քնարական հերոսուհին ամենեւին էլ նույնը չեն: Մարդկային խորհրդավոր ներաշխարհի գաղտնիքները, Հոմերոսի եւ Սաֆոյի դիցաբանական ժամանակներից ի վեր, հակառակ մարդկության զարգացման ու հասարակական կարգերի փոփոխությունների, ունեն որոշակի կայունություն:

Նույն զգացմունքները՝ սիրո շնորհիվ գեղեցկուհու աստվածացումը, նրան հավատարմորեն նվիրվածությունը, խանդը, դրժումը, զոհաբերվելու պատրաստակամությունը, հետաքրքրում են տարբեր դարաշրջանների, տարբեր ազգությունների եւ սերունդների պատկանող ընթերցողներին, որովհետեւ համամարդկային արվեստի այդ գործերի մեջ նոր սերունդները փնտրում եւ գտնում են իրենց սիրո բովանդակությանը, իրենց գաղափարական ու զգացմունքային աշխարհներին հարազատ ու համապատասխան դրսեւորումներ կամ նրանց տարատեսակ նրբերանգներ: Սրա շնորհիվ են դասական արվեստի համամարդկային արժեքները պահպանում իրենց այժմեականությունը հին ու նոր բոլոր ժամանակներում:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լուսավորական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստորագր. տպագր. 16.10.2015 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ